

891. 99

R-17

Գաղափար
Ընդ թարգմանության
ազգային
1912թ.

891. 99

R-17

Արցուն
Օհ-արհալ

891. 334
 17

ՀԱՍՏԱՆԵՍ 13 APR 2011



1002
 7157



ՇԷՆ ԹԱԳԱԻՈՐԻ
Ա Ղ Ջ Ի Կ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԶԻՐԱ
 Գ. ԲԱՐԵՓՈԽԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ Տպարան «ԷՊՕԽԱ» Մուգեյսկի պեր. № 8 1912

ՍԻՐԵԼԻ ՀՈԳԵՋՆԵՐԻՆ

Կրկին բարի էրք եմ մաղթում քեզ դէպի հայան-
գաստանը, բաղդաւոր Աղունիկ: Բաղդաւոր երկու կող-
մով. առաջին որ՝ առանց զբաղատների բարեխօսու-
թեան կամ օգնութեան. կարողացար քո ներքին արժա-
նիքով բաղմաթիւ ընթերցողներ գտնել աշակերտու-
թեան մէջ ու երրորդ անգամ տպել տալ քո պատմու-
թիւնը, երկրորդ որ՝ քեզ սիրողներին ուրախացնելու
համար այժմ պատկերազարդ ես հանգէս գալիս, մի բաղդ,
որին՝ քո աւագ քոյր Ծովիկարը գեռ չի արժանացել:
Մի բաւականանալ հին քարեկամներով, նրանք
արդէն չափահաս են դարձել, գնահատելի, անսխալ, մտիր
պատանեկութեան շրջանները, նորածիլ սերնդի մէջ
նոր բարեկամներ ու բարեկամուհիներ փնտրիր, նրանց
ընթերցասիրութեան ծարաւը վառիր: Քո առաքինի օ-
րինակով նրանց սրտերը աղնուացրու, քո համբերու-
թեան զէնքով նրանց վշտերը թեթեացրու. թող քեզ-
նով քաջալերուած նրանք սովորեն աքիաբար տոկալ
կեանքի անիրաւ հարուածներին ու յաղթել չարին:

Քամ. Ս.

1912 թ. մարտ Թիֆլիս

ասում էր. «նուա՛ն կարմիր հատիկ է». երրորդը
թէ՛ «միամորի ճիւղոտ է»: Իսկ աղբատները, որոնք
միշտ նրա ձեռքին էին ողորմութիւն ստանում,
«աղունիկ» էին կանչում: Աղունիկ էլ մնաց անունը:
Հայրը վճռել էր Աղունիկին տալ մի աղբատ
տղի, որ լինէր խելօք և արդար: Որդու համար
էլ որոշել էր հարսնացու ձարել չունևոր ընտա-
նիքից: Թագաւորի այս վճիռների վրայ շատ մար-
դու խելքի ծէրը գնում էր:

Տղէն երբ չափահաս դարձաւ, Շէն թագա-
ւորն ասեց.

— Գնահ, որդի, հարսնացու ընտրիր. վեց ա-
միս քեզ ժամանակ եմ տալիս: Աշխատիր չըխա-
բուես: Աւելի սրտիդ ընտրածին հաւանիր, քան
թէ աչքերիդ: Ի՛նչ տեսակն էլ ընտրես, ինձ ըն-
դունելի է, միայն զգոյշ կաց, սրդեակ, աղբատ
ու հպարտից:

— Միամիտ կաց, հայր, կաշխատեմ բերածս
քո սրտովը լինի, սիրելի մօրս համ ու հոտ տայ,
ասեց տղէն ու պալատական իշխանի հետ ճամբայ
ընկաւ:

2. Ինչպէս խաբունց Շէն թագաւորազը

Երբ բաւական տեղ գնացել էին, իշխանը
խօսք բաց արեց.

— Թագաւորազը ողջ լինի, այդ բան էր, որ
թագաւորն արեց: Ես հաստատ զիտեմ, որ քո

աչքը իմ աղջկայ վրէն էր:

— Ճշմարիտ որ այդպէս է, անկեղծ պատասխանեց թագաւորազը, բայց ձեռովս ինչ է գալիս: Հօրս արածին հակառակել չեմ կարող. նրա որոշումն է, որ ես աղքատի աղջիկ ուզեմ, իսկ դու հարուստ ես:

— Իմաստուն կարգադրութիւն է հօրդ արածը, մտքումը ծիծաղելով խօսեց իշխանը, աղքատ աղջիկները միշտ խոնարհ են լինում, ո՞վ է բան տալով: Աւելի լաւ է հօրդ հնազանդես: Վնաս չունի, իմ աղջիկն էլ մի երիտասարդ է կրտամ. ինչ արած, որ նա շատ էլ գովական չի լինիլ, բայց մեծ հոգս է հարկաւոր, որ մեր թագաւորի հարսը լինի աննման թէ գեղեցկութիւնով և թէ շնորքով:

Թագաւորազը, որ բարեօրիտ ու միամիտ տղայ էր, վրայ բերեց.

— Շատ շնորհակալ եմ, իշխան, ինչ ասել կուզի, որ դու փորձառութիւնով ու խորհուրդներովդ պիտի օգնես ինձ. հայրս այդ մտքովքեզ ինձ հետ զրեց: Առանց քո յօժարութեան ես ոչովի հարսնացու չեմ ընտրիլ:

— Իմ գլուխը միբերի թագաւորազի համար վէր գրած է, ինչ տեսակ նեղութիւններ ասես, պատրաստ եմ բաշել, պատասխանեց իշխանը և գոհ սրտով շարունակեց ճամբէն:

Ամեն տեղ ձայն էր ընկել, թէ թագաւորազի համար հարսնացուի են ման գալիս: Քաղաքում

թէ գիւղում նրան մեծ պատուով ընդունում, ընտիր ու գեղեցիկ աղջիկներ էին ցոյց տալիս, ամենն էլ աղքատ տանից, մինը միւսից գեղեցիկ. թագաւորազը հաւանածին ուզում էր նշան տալ, բայց իշխանը միշտ քար էր խառնում և մտադրութիւնից ետ կացնում: Թագաւորազը միամիտ էր, բարի մտքով էր մեկնում նրա խափանելը. բայց ճշմարիտն այն էր, որ իշխանը Շէն թագաւորի վրայ բարկացած, ուզում էր նրա որդու վիզը մի աղքատ ու հպարտ աղջիկ կապել և գրանով իրա վրէժը հանել: Նշանադրութիւնը այսօր կամ վաղը գցելով իշխանն այնքան ծածուկ հարցուփորձ արեց, որ վերջապէս իրա փնտրած աղջիկը գտաւ, աղքատ ու գեղեցիկ, բայց կռուարար ու ամբարշտ:

— Թագաւորազը ողջ լինի, ասեց իշխանը, քո ուզած հարսնացուն ես արգէն գտել եմ, ամեն բանով գովական, ամեն բանով շնորհալի: Բայց որովհետեւ մենք շատ աղջիկներ տեսել ու չենք հաւանել, հիմա նրանց բարեկամները նախանձելուց սկսելու են վատաբանել մեր ընտրածին: Աշխարհիս բանն այդպէս է. աւելի լաւ կը լինի շտապենք, այդ աղջկանը տեսնենք. եթէ հաւանես, նշան տանք: Լսել եմ, որ նրա ծնողները աղքատութիւնից ուզում են իրանց աղջկանը մի հարրան մարդու վրայ ծախել:

— Գնանք, Կնանք, իշխան, ձեռից չըզցենք այդպիսի լաւ աղջիկը, հաւանութիւն տուեց նրա

խօսքին թագաւորազը և շտապ քայլերով հասաւ աղջկատուն: Հէնց որ երեսի գեղեցկութիւնն ու սիրուն հասակը տեսաւ, մնաց պելացած նայելիս: Խորամանկ իշխանը այս բանը որ նկատեց, ուրախացաւ իրա սրտում. որովհետեւ ցանկութիւնը գլուխ էր գալիս: Մօտեցաւ փեսացուի աւանջի տակին փոսփրսաց.

— Թագաւորազ տէր, մենակ սիրողութիւնով չէ հրաշալի, գեռ պիտի իմանաս թէ ինչ շնորքներ ունի, որ հիանաս: Այսպիսին ճարելը հեշտ չէ. շտապենք, նշանը տանք, թէ չէ նախանձոտ հարեանները հազար ու մի սուտ կը հնարեն խեղճ աղջկայ վրայ:

— Հաւատալի է, հաւատալի, իշխան, վրայ բերեց միամիտ թագաւորազը, նախանձը շատ բան կանի, ահա ստացիր նշանը, տո՛ւր, վերջացրու:

Իշխանը նշանի հետ շատ ոսկի տուեց աղջկայ ծնողներին, յետոյ հարսնացուին նոր շորեր հագցրած, զարդարած դրին ձիու վրայ ու բերին Շէն թագաւորի պալատը:

Այստեղ եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արին: Խնդացին աշխարհովի, ամենն էլ եկան, նորահարսին շնորհաւորեցին, անթիւ ընծաներ տուին ոսկով և մարգարիտներով զարդարած ու տարան առօք-փառօք բազմեցրին ամենից վերև: Աղքատի աղջիկը ինքն իրա մէջ ուռաւ. ինչոր չէր տեսել իրանց պատին, հիմի տեսաւ իրա ճակատին:

Շատերին դուր եկաւ հարսի խոնարհ կերպարանքը. բայց ո՛ւր նա, ո՛ւր Աղունիկը: «Արեգակի մօտ լուսինն ի՞նչ է», ասում էին բարեկամներից մի քանիսը, առանց իմանալու, որ նորահարսի սրտին այդ խօսքերով դադ են դնում: Շէն թագաւորը սրտի ուրախութիւնից չէր իմանում թէ ինչ անի. նորահարսի տեսքին ու հասակին նայելով ցնծում էր, յետոյ դառնում թագուհուն աչքալոյս տալիս, որ Աստուած իրանց այսպիսի մխիթարութիւն ուղարկեց:

Թագաւորի հետ ցնծում էր ողջ աշխարհը:

3. Ինչի՞ց մեռան Շէն թագաւորն ու թագուհին

Անցկացաւ մի ամիս, երեք ամիս. քաղցր հարսը փոխուեց, դառնացաւ: Պալատում մեծ ու փոքր նրան սիրում, գուրգուրում էին, այդ բանից նա երես առաւ, իրաւունքներ բանացրեց և սկսեց համարձակ պատասխաններ տալ կերսարին ու սկեսուրին: Նշանակութիւն չըտուեց, թէ տանը իրանից աւելի մեծ կայ, պահանջեց, որ ամենն էլ իրան գլուխ վէր բերեն, խոնարհուեն:

Շէն թագաւորը ծածուկ թէ աշկարայ շատ խրատեց, որ հարսին կոտորի, ճամբի բերի, չեղաւ: Ով որ նորահարսի գեղեցկութիւնն էր տեսել՝ առանց բնութեանը ծանօթ լինելու, երանի էր ապալիս թագաւորին այսպէս.

— Բաղդաւոր նրա աչքին, որ այնպէս գեղե-

ցիկ ու խոնարհ հարս ճարեց. մենք էլ գնանք այսուհետև աղքատների տներից հարսնացու ընտրենք:

Եւ ճշմարիտ, նորահարսը դրսեր ման գալիս իրան այնպէս ծանր էր պահում, ինչպէս ծով, այնպէս մեղմ էր զրուցում, կարծես անմեղ գառը, բայց երբ պալատն էր մտնում, Աստուած հեռու տանի, լեզուով ու արարմունքով այնպէս էր շանթում ու խայթում, ինչպէս նետ-օձ:

Աղունիկի գեղեցկութիւնը փշի պէս ծակում էր նրա աչքը: Թագաւորն ու թագուհին հարսին շատ համբերեցին, բայց տեսան, որ վերջ չի լինում նրա ամբարշտութեանը, սկսեցին մտածել, մտածելուց սկստարտել ու վերջը ցաւի տիրանալ:

Ի՞նչ անէին խեղճերը, ոչ կարողանում էին ամբարշտին դուրս անել, ոչ էլ իրանց ցաւը լոյս աշխարհ հանել: Ծարահատուած հայրը մի օր գահի վրայից տղին այսպէս յանդիմանեց.

— Ինչո՞ւ այս շանթը իմ տուն զցեցիր: Քանի անգամ պատուիրեցի, որ աղքատ ու հպարտից հեռու կենաս: Այս ի՞նչ սև օձ էր, որ իմ տան գլխով փաթաթեցիր:

— Հայր իմ, ի՞նչ անեմ, լալով պատասխանում էր որդին, ես ի՞նչ մեղ ունեմ: Դրա ընտրութիւնը իշխանն է արել:

Թագաւորը խիստ դառնացած էր. կանչեց հարցուփորձ արեց և վերջը երբ ստուգեց, որ իշխանն էր մեղաւոր, իսկոյն պալատից արտաք-

սեց ու ինքըն էլ մի քանի շաբաթ չբացեց, անկողին ընկաւ: Ծերութիւնը մի կողմից էր յաղթել, տան խառնակութիւնը միւս կողմից:

Երբ ծանրը հոգեվարք ժամանակ որդին եկել էր մխիթարելու, հայրն ասեց:

— Ո՛րդի, քո միամտութիւնն է ժամն չը-



նստեց ինձ, խաբուեցիր կին ընտրելու մէջ և ինձ շուտով գերեզմանի դուռն ուղարկեցիր... Ձուր տեղ մի լար, սրանից դէնը քո լացն ինձ չի օգնիլ: Բայց լսիր վերջին պատուէրս, թէ ինչ ես անելու: Ինձանից ետ աշխարհիս մեծն ու կառավարիչը դու ես: Քեզ խրատել հարկաւոր չի, գոհութիւն Աստծու, խելահաս մարդ ես: Կնկանդ համոզիր, որ մօրդ պատուի, չըվշտացնի, նա գոնէ մխիթարուած սրտով գերեզման մտնի: Իմ գլխաւոր հոգսըս Աղունիկն է. նրան խնամողն ու պահպանողը մայրդ կըլինի, նա ոչ բեզ նեղութիւն կըտայ, ոչ կնկանդ: Իմ հարստութիւնից մի փոքր մասը եթէ տաս, մինչև կեանքի վերջը ապահով կապրի: Յուսով եմ, որ հաւատարիմ լինես իմ պատուէրին: Դու գիտես, որ ես մեռնում եմ գոռոզ կնկանդ երեսից. աշխատիր իշխել նրա վրայ, թէ չէ մօրդ ու քրոջդ գլորելուց ետ բեզ էլ հանգիստ չի թողելիլ հօրդ պալատում:

Թագաւորազը լալով մօտեցաւ հօր ձեռները համբուրեց:

— Մոստանում եմ, հայր իմ, պատուէրներդ կատարել ճշտութիւնով:

Շէն Թագաւորը օրհնեց իրա շուրջը եղողներին, կանչեց Թագուհուն, մնաս բարե ասեց, ձեռը Աղունիկի գլխին դրեց ու հոգին աւանդեց: Թագաւորազն իսկոյն գնաց կնոջը նախատեց:

— Ինչքան գոռոզ արարած ես, որ կերսարդ

մեռաւ, մի անգամ ակը տալու չեկար:

Հարսը, երբ կերսարի մահը լսեց, տեղից վեր թռաւ ու բարձրաձայն ճուալով, լալով սգաւորների մէջն ընկաւ առանց երեսին քող ծածկելու: Շատերն ասում էին.

— Տեսէք, տեսէք, ինչքան է սիրում կերսարին, որ սրտի կսկըծից ամօթը մոռացել է:

Թագաւորազը մեծ փառքով հօր Թաղումը կատարեց և Աղունիկի ձեռով ղողորմութիւն բաժանեց տնանկ ու աղքատներին:

Հարսը նոյնպէս սուգ էր պահում տանեցոց հետ. հանդարտ էր, կարծեցին թէ բնութիւնը փոխել է:

Ժամանակ անցնելուց ետ Թագուհին աղջկանն ասեց.

— Աղունիկ, փեսացու ընտրելուդ օրերը մօտենում են, երկար ապրելու յոյս չունեմ, ուզում եմ աչքովս պսակդ տեսնել: Հայրդ վճռել է, որ մի աղքատ ու անուանի տղայ ընտրես, քո բաժինքով նրան բաղդաւորես: Բայց ես մի բան էլ եմ ասում. լաւ կըլինի առաջ քո հասակի աղջկերանց իրանց մուրաղին հասցնես, նրանց մաղթանքն ու նրանց մայրերի օրհնանքն առնես, յետոյ քո ընտրութեան ետնից կենաս: Գանձարանի բանային հայրդ ինձ է տուել. առ, գնա, ինչքան ուզում ես ոսկի, արծաթ վեր կալ ու քո գիտեցած տեղերը բաժանիր:

Աղունիկը հնազանդ աղջիկ էր, մօր խոր-

հուրդը լսեց ու սկսեց թաղէթաղ պտըտել, չքաւոր աղքատներին փող բաժանել: Հարսը այս որ իմացաւ, էլի քաջքերը մօտ եկան, կատաղեց ու սկսեց ինքն էլ իրա գլխու կարգադրութիւններ անել պալատի մէջ: Մարդը բարկացաւ, Աղունիկի առաջ կնկանը յանդիմանեց.

— Մի՞թէ չես իմանում, որ առանց տան մեծից իրաւունք խնդրելու չը պիտի մի բան անես: Կինը պատասխանեց.

— Այս տան մէջ տարիքով մեծը քո մայրն է, բայց թագունին ես եմ, իշխանութիւնն իմն է. ուրեմն ինչո՞ւ չեմ կարող անել:

Որքան էլ թագաւորազը համոզում էր, որ չը հակառակուի, սկեսուրին խոնարհ լինի, կնիկը աւելի գոռոզ պատասխաններ էր տալիս:

— Եթէ ձեռներս կապուած պիտի լինէին աղքատի պէս, մեր տանը կընստէի, էլ ինչո՞ւ էի թագաւորի տուն հարս գալիս:

Թագունին հարսի ասածները թէ ականջով էր լսում, թէ Աղունիկի միջոցով, և ցաւի վրայ ցաւ էր աւելացնում: Աղջկան ու տղին նայելիս սիրտն ուղում էր փառաւորութի, բայց հարսի արարքները միտք բերելով մաշուում, ճէրք էր ընկնում: Ոտի վրայ ման գալ չը կարենալով վերջի վերջոյ անկողին մտաւ. որդին նրա տկարանալու վրայ շատ կոտորուեց, գիտէր, որ իրա կնկայ ձեռից է հիւանդացել, սեւերես էր մօր մօտ, ուշ ուշ էր գնում ակը տալու. Աղունիկն էր

միայն, որ սեասրտած կանգնած էր լինում մահճի մօտ և գիշեր ցերեկ հսկում էր մօրը: Այն ինչ ամբարտաւան հարսը իրա համար հասցիքս նստած ասում էր.

— Եթէ ճէրք սկեսուրս էլ կը մեռնի, ես գիտեմ թէ Աղունիկի գլխին ինչ կը բերեմ: Թող ասեն, որ նա արեգակ է, իսկ ես նրա կշտին լուսին էլ չեմ:

Այսպէս մտածելով ոչ մի անգամ էլ տեսութեան չը գնաց: Թագունին ցաւից յաղթուած վերջին շնչումն էր, կանչել տուեց որդուն և ասեց:

— Որդի, ինչ որ մինչև օրս խնայել եմ քեզ ասելու, այսօր յայտնում եմ, որ իմանաս, թէ մայրդ ինչ վիրաւոր սրտով է հեռանում աշխարհից: Շատ երկար կըլինի, որ միառմի պատմեմ քո կնկայ արարքները: Մարի պէս հայրդ նրա ձեռից դարդախեղդ եղաւ, մեռաւ: Եթէ միևնույն արջիկանս հագսը չըլինէր, այսքան դառն օրերի չէի գիմանալ: Թէպէտ Աղունիկին աչքի լուսից աւելի եմ սիրում և կամենում եմ բաց աչքով պսակել, որ հօրդ պատուէրը կատարած լինեմ, բայց կինըդ, որդի, նրա գէշ-գէշ խօսքերը սիրտս այնպէս են փտեցրել, որ էլ ապրելու ոյժ չը կայ: Ես մեռնում եմ և միտքս քեզ յայտնելով կամենում եմ ամեն մեղք ու վարձք քո վրիզը գցել: Հայրդ ինձ է յանձնել քրոջդ, որ մուրազին հասցնեմ: Նրա բաղդից ես տկարացայ, ձեռս կարճա-

ցաւ. կենդանութեանս օրով չըկարողացայ նրա ուղած փեսացուն ընտրել: Ես այժմ յանձնում եմ քեզ ու խնդրում, որ դու լինես նրա համար ամեն բան, թէ եղբայր, թէ հայր և թէ մայր: Եթէ ուզում ես, որ գերեզմանումս էլ քո արևն օրհնեմ, Աղունիկին սրտապախա չըթողնես. այնպէս լաւ պիտի մտիկ անես, որ չիմանայ թէ որք է: Փառք Ստեղծողին, լուսահոգի հօրիցդ մնացած պաշարներն անհատնում են և գանձերն անսպառ. համ դուք վայելեցէք, համ աղջկանս տուէք: Աղունիկը մեծ պահանջներ անող ոքմին չէ. դու պիտի հարցնելով իմանաս նրա ուղածը: Եթէ կնկանդ յուսով թողնես, նա ոչ թէ հաց ու շոր կըխնայի, այլ նախանձից նրան կըհեռացնի իրա հօր պալատից:

Որդին ուշադրութիւնով լսեց մօր խրատն ու կտակը, խոստացաւ սրբութիւնով կատարել: Թագուհին իրա մօտ կանչեց Աղունիկին, ձեռք գլխին դնելով օրհնեց, համբուրեց, նրան եղբօրը յանձնեց ու արդար շունչը փչեց:

Շէն թագաւորազը մեծ պատուով թաղեց իրա մօրը և սկսեց աշխարհը կառավարելու ետնից կենալ:

4. Աղունիկն ինչո՞ւ էր տանջւում հարսի մանկերում

Եղբայրն Աղունիկին առաջուց էլ սիրում էր, բայց ծնողների մահը և նրանց պատուէրները



աւելի վարարացրին նրա սէրն ու գգուանքը: Քրոջը տխուր տեսնելիս, իրա շորձերը թողնում, մօտը նստում էր, տխրութեան պատճառը հարցնում, սրտի ուղեւիղն իմանում և իսկոյն կատա-

ընում տալիս: Կարծում էր թէ Աղունիկի տխրութեան պատճառը միայն ծնողների մահն է, էլ չէր իմանում, թէ իրա կնիկը ինչ չար աչքով է նայում տալի վրայ:

Օր չէր անցնում, որ նախանձ հարսը չնչին բանի համար Աղունիկի հետ կռիւ չըտայ ու ծանր խօսքերով թագաւորին, թագուհուն չըհայհոյի: Ի հարկէ այս բոլորն անում էր մարդից ծածուկ: Շատ էլ վշտանում էր խեղճ՝ աղջիկը, շատ էլ սրտի կսկըծից քաշւում էր իրա սենեակը, կամ պարտէղի ծածուկ անկիւնները և աղի-աղի լաց լինում, բայց երբէք մտքովը չէր անցկացնում եղբօրը գանգատուել: Վախենում էր դրանով աւելի կատաղեցնի չար հարսին: Հէնց որ եղբօր ոտնաձայնը լսում էր, Աղունիկը արտասուքները կռլ էր տալիս, լացն ու հեկեկոցը խեղդում և երեսը սրբելով եղբօր առաջ ուրախ դուրս գալիս:

Այդպիսի ժամանակներ հարսն ականջը ծածուկ մօտեցնում էր դռան ճեղքին կամ ծառի ետեւը թափնւում, որ խօսակցութիւնն իմանայ: Հաւատացած էր, որ իրա տալը եղբօր մօտ լաց կըլինի և իրանից կըգանգատուի, բայց սպասածի հակառակ լսում էր, որ քոյր ու եղբայր իրար հետ խնդում, ծիծաղում են: Այդ ժամանակ նախանձից ուզում էր միջից կէս լինի: Երբ տեսնում էր, որ իրա շանթածով, տուած տանջանքներով տալը կոտորւում չի, սւգում էր, որ իրա

միսն ուտի: Երբ տեսնում էր, որ քոյր ու եղբայր իրա ցանկութեան հակառակ սէր են անում, ինքն իրա մէջ տապակ-տապակ էր լինում:

— Չէ, այսպէս չի լինիլ, ասում էր, պիտի սրանց սրտերը բաժանել, այնպէս սառնութիւն գցել մէջները, որ աչքով աչք չունենան իրար նայելու:

Եւ սկսում էր իրար ետնից անվերջ գանգատներ անել Աղունիկից թագաւորազին: Սակայն բոլոր հնարները զուր էին անցնում, եղբայրը ոչ մի զրպարտութեան չէր հաւատում: Հարսը ճանաչելով իրա մարդու միամտութիւնը, չէր գաղարում գանգատները շարունակելուց:

— Օրական մի բորոցի չափ կասկած աւելանայ եղբօր սրտում, բաւական է, ասում էր օձիւոր հարսը:

— Գիտե՞ս ինչ, սկսեց հնարել առաջին օրը, քո քոյրը տնաղ է անում ամենի մօտ, որ ես աղբատի տանից եմ եկել:

— Գիտե՞ս, քու երեսպարզ քոյրդ ի՞նչ է ասել, աւելցրեց երկրորդ օրը, սրա ու նրա մօտ ասել է, որ իմ խօսքը պալատական իշխանի հետ է, որ իբրև թէ ես քեզ անհաւատարիմ եմ:

Վրայ երրորդ օրն էլ ասեց.

— Գիտե՞ս ինչ, քո պըճոկուած, բըբըրուած քոյրը ասել է, թէ եղբայրս է մեղաւոր, որ ծնողներս կարճ ժամանակում դարդախեղդ եղան, իրար ետնից մեռան:

Սրանց պէս հարիւր բան ինքն իրան հնա-
րում, թագաւորագի ականջն էր հալում: Եղբայրը
քնութիւնով հանդարտ էր, չէր բարկանում քրոջ
վրայ, բայց թւում էր, թէ տասը սուտից մինը
ճշմարտի տեղ էր ընդունում և իրա մէջ վշտա-
նում: Քրոջ սիրտը չըկոտրելու համար կնկանն
էր սաստում, որ ձեռ վերցնի նրանից: Բայց
հարսը տեսնում էր, որ ամուսինը աչքի տակով
է նայում Աղունիկին. ուրախանում էր, որ իրա
չար դիտաւորութիւնը յաջողութիւն է գտնում
և աւելի սիրտ էր առնում և ծանր զրպարտու-
թիւններ սարքում տալի վրայ:

— Իիտես քո նախանձ քոյրն հիմի ի՞նչ է
ասում: Ասում է թէ՛ վայ իմ օրին, որք եմ
մնացել. ծնողներս դուր տեղը եղբօրս յուսով
թողին, նա օտարի աչքով է նայում ինձ: Անտէր-
անտիրական աղջիկներն ինձնից լաւ վիճակի
մէջ են. եթէ չամաչեմ, կըհեռանամ հօրս տա-
նից, որ ոչ եղբօր երես տեսնեմ, ոչ էլ հարսի:

— Տեսնում եմ ինչ ապերախտ պտուղ է քո
քոյրը: Ափսոս քո աշխատանք: Ասենք թէ ես
նրա համար վատ եմ, օտար եմ, դու հօ լաւ ես,
քո ջանն ու հոգին հօ նրա համար գնում է,
տասը մատդ նրա համար ճրագի տեղ վառած ես
պահում, քեզ ինչո՞ւ է վատաբանում, սրա-նրա
մօտ բամբասում: Ես ու իմ հոգին, ինչ էլ ասի
քեզ, արժան է, որովհետեւ միամիտ ես ու չեմ
իմանում թէ ո՞վ է քո չարակամն ու բարեկամը:

Թագաւորագը ոչինչ չէր պատասխանում,
միայն յոնքերը կիտում էր ու առանձին սենեակ
քաշուելով մտքի մէջ ընկնում: Հարսն աւելի
սիրտ առնելով ասում էր ինքն իրան:

— Ուխայ, բանս յաջողում է, յոյս ունեմ
այնպէս անեմ, որ հօր տանից տկլոր դուրս գայ:
Թող այն ժամանակ պարծենայ, որ ինքը ինձա-
նից սիրուն է. տեսնեմ ո՞վ է այն աղքատ տղէն,
որ յիմարի նման յօժարւում է ու դար ու դարգակ
աղջկանն ուզում: Տեսնենք տնազատեղը ես կը
լինեմ, թէ Աղունիկը:

Աղունիկը չըգիտէր թէ հարսն իրանից բամ-
բասանքներ է անում. միայն այն էր զարմանում,
թէ ինչո՞ւ եղբայրն իրան ուշ-ուշ է այցելում
կամ հանդիպած ժամանակ երեսը շուռ է տա-
լիս: Գնում էր եղբօր մօտ, որ վիշտը յալտնի,
բայց բանի գնում էր, հարսն այնտեղ էր լինում:
Ամօթից ու վախից կամ ոչինչ չէր խօսում կամ
անմեղ պատճառ տալով դուրս էր գալիս:

— Այս լաւ առիթ է, մտածում էր հարսը,
երբ սա շուտ-շուտ եղբօր մօտ է գալիս, ան-
շուշտ մտքումը մի բան կայ: Լաւ, թող սպասի
ու տեսնի, թէ գլուխն ինչ եմ բերում:

Մի օր հինումին շորեր իրար մօտ հաւաքեց,
վառեց, ծուխումիսով տունը լցրեց, յետոյ ճուռ-
ով դուրս փախաւ:

— Վայ օգնեցէք, շորերս կրակը լափեց:

Ծառաները վաղեցին ու ուղեցին կխճոր

տալ, հանգցնել կառ ընկած շորերը, բայց հարսն արգելեց նրանց վրայ ծղրտալով.

— Թողէք թագաւորը գայ և իրա աչքով տեսնի, թէ քոյրը, անզգամ քոյրը անց է կրակը դրել շորերիս միջին ու իրա սենեակում անմեղ ձեացել:

Ծառաները հեռացան թէ չէ, հարսն էլի հնամաշ շորեր ածեց կրակի վրայ: Թագաւորազը պալատը մտաւ. կինը մրկած ու այրուած շորերի վրայ ձեռը մեկնելով ասեց.

— Ի՞նչ պատուհաս էր քոյրդ, որ ծնողներդ թողին. եթէ լաւ պտուղ էր ու շատ էին սիրում նրան, հետները կըտանէին, էլ ի՞նչ էին ջանիս համար ցաւ թողում: Արած բամբասանքները բաւական չէին, այսօր էլ շորերս է կրակի բերան տուել: «Եղբայրս իրա կնկայ համար երկերկու է առնում շորը, իսկ ինձ համար մինն էլ չի առնում. ես էլ այսպէս կայրեմ», ասում է քո քոյրը: Բա՛ն այս համբերելու բան է: Էգուց էլ ո՞վ գիտէ ինչ փորձանքներ բերի գլխներիս: Սրա պէս անամօթին, ապերախտին վաղուց էր հարկաւոր տանից վռնգել, բայց դու պատուած ու պաշտած ես պահում, ի հարկէ նա էլ քեզ պէսի լաւութիւնը այսպէս կըվճարի:

Շէն թագաւորազն անխօս գնաց քրոջ մօտ. տեսաւ աղիողորմ լալիս է ու արտասուքը կարկտի պէս աչքերից թափում.

— Ա՛խ, մայր իմ, ասում էր, ինչո՞ւ որք

թողիր ինձ, ինչո՞ւ հետդ գերեզման չըտարար: Այս ինչ դառն օրեր է, որ քաշում եմ հօրս տանը:

Եղբայրը զթաշարժուեց նրա լացի վրայ, մօտեցաւ, ասեց.

— Հանդարտուիր, քոյր իմ, ո՞վ է քեզ վըշտացրել: Ի՞նչ անենք, որ երկու կտոր շոր է այրուել. նորը կառնեմ, դարդ մի անիլ: Դու հօմեղաւոր չես, ինչո՞ւ ես սրտի դալիս. բաւական ժամանակ է, քեզ մօտ չեմ եկել, կարելի է դրա համար ես նեղացել: Ես քեզ մօտ մեղաւոր եմ, քոյրիկ, ներիր ու համարձակ ասա՛ն վիշտդ: Ոնց տեսնում եմ հարսիցդ ես վշտացած, ի՞նչ ունես նրա դէմ, ասա՛ն:

Աղունիկը պատասխանելու տեղ լացը շարունակեց, որովհետեւ չըզիտէր հարսի արած գէշ շութիւններից որն ասի և որը թողի:

— Մի քաշուիլ, ասա՛ն, կրկնեց եղբայրը ձեռը քրոջ վզով գցելով. հարսդ քեզ վրայ անթիւ բաներ է ասում, ինչո՞ւ չես ջրում, կասկածները քեզանից հեռացնում: Չըլինի թէ վախենում ես: Ո՛ւմնից:

— Բացի Աստծուց, ես ոչովից չեմ վախենում, եղբայր, ասեց քոյրը: Բայց հաւատա՛ն Աստծուն, որ ես ոչ մի բանից տեղեկութիւն չունեմ. ինչ ասում է հարսըս, բոլորն իրան սարքածն է:

— Ամենից շատ ուրախացողը ես կըլինեմ,

քոյրիկ, երանի բոլոր ասածները սուտ լինէին: Հանգիստ կաց, հարսը չի կարող քեզ ոչինչ անել. այսուհետեւ նրա հետ ոչ մի գործ էլ մի ունենալ:

Քոյր ու եղբայր խօսելիս, հարսը կատուի պէս մարուղ կացած լսում էր ու իրա մէջը փրփրոում, կատաղում «ախ, ինչպէս հանդարտ է խօսում քրոջ հետ: Ելի մտերմացան, ինչ անեմ, որ բաժանեմ և վերջնական բաժանեմ իրարից»:

Յոնքերը կիտած, գլխակախ մտածում էր, որ հնար գտնի: Սրտի չարութիւնից աշխարհը մտէն ընկել էր, ինչ թէ կաթնակեր մանուկը, որ օրօրոցում վրչում էր անծիծ և անփոփ:

Ուտել-խմելը մոռացած, չար հարսը զունաւորած ման էր գալիս սենեակէ սենեակ առանց դադարելու: Ծառաները վաղուց էին սկսել զրգուել, սարսափել նրա դէմքից ու աչքերից: Աղունիկը հօ շաբաթներով նրա երեսը չէր դուրս գալիս, փակուած էր իրա սենեակում. ճաշն էլ այնտեղ էր ուտում:

Շէն Թագաւորազը քրոջ բաժինքի պատրաստութեան ետնից էր: Աղունիկը անհամբեր սպասում էր եղբօր առաջարկին, որ փեսայ ընտրէր ու գնար իրա արևի ձէնն ածէր: Չար հարսը հէնց մի առիթ էր փնտրում, որ Աղունիկի վրայ բամբասի:

— Տեսնում ես, ինչքան հպարտացել է քոյրըդ, ասում էր մարդուն, նշանուելու օրերը մօ-

տեցել են, գլուխը չի վերցնում մեզ մօտ ճաշի գայ:

Մարդու մօտից հեռանալով ինքն իրան ասում էր.

— Սպասիր, ամբարտաւան աղջիկ, քանի այս շունչը վրէս է, չեմ թողնիլ մուրադիդ հասնես: Ինչպէս որ հօրդ ու մօրդ դառնացած սրտով գեղեզման իջեցրի, քեզ էլ արիւն արտասուքով պալատից կը հեռացնեմ: Բաժինքի տեղ ծեղ չեմ տալ, որ աչքդ դնես: Սպասիր, միամիտ Աղունիկ, ես մեռած պիտի լինեմ, որ դու աշխարհում օր տեսնես:

5. Ի՞նչ անգուժ քան արեց նախանձոտ հարսը

Մի իրիկնադէմ չար հարսը կատաղած ինքն իրան խօսում էր.

— Մինչև օրս բոլոր հնարները զուր անցկացան, բայց մի՞թէ էլ հնար չըկայ և այնպիսի հնար, որ թագաւորազի սիրտը տակից մղկըտացնի: Ես մինչև իմ մարդուն թունդ կսկիծի չըհանդիպեցնեմ, նա իրա պաշտած քրոջից ոչ ձեռ կը վերցնի, ոչ պալատից կը հեռացնի: Չէ, սրտիս փափազը պիտի կատարեմ, ինչ գնով էլ լինի, միայն թէ Աղունիկին, իմ աչքի փուշին կործանեմ, օրը խաւարեցնեմ, որ մարդիկ չասեն թէ՛ նա արեգակ է, ես լուսին:

Գիշեր ժամանակ ամեն ինչ խաղաղ էր,

սլալատում ամենը քնած. չար հարսն էր, որ դե-
կտրած անքուն էր մնացել: Անկողնից զգոյշ վեր-
կացաւ, մօտեցաւ օրօրոցին, մանուկի գլուխը



ձախ ձեռով բարձրացրեց, աջ թևում սլահած
դանակը մեկնեց, մի ակնթարթում երեխին մոր-
թեց: Արիւնոտ դանակը զգոյշ ու կամաց տարաւ

միւս սենեակը, Աղունիկի զրպանը դրեց, հետը-
հետին դարձաւ օրօրոցի մօտ ու բարձր, կատա-
ղի ձայնով ճուռաց:

Թագաւորազը ճուռոցի վրայ զարթնեց ու մը-
նաց սարսափած: Չըզիտէր, թէ կնիկն ինչո՞ւ է
ծվում, ծկլթում. ուզում էր հանդարտ հարցնի-
ր պատճառը, որ յանկարծ կնիկը խօսքը նրա բե-
րանից խլեց:

— Ըհը՛, այս էլ քու ոչուփուշ քոյրը, ձեռը
մեկնեց օրօրոցի վրայ. որ ասում էի թէ այդ անըզ-
գամին տանից հեռացրու, սրա համար էի ասում:

Օրօրոցը թեքեց, արիւնաշաղախ մանուկին
ցոյց տուեց ու սուտ հեկեկոցն սկսեց.

— Այս Աստուած կըվերցնի՞, ես կսկըծից
մղկըտամ, մարդասպան քոյրդ իրա համար հան-
գիստ խռմփայ: Էլ ասելու էս, թէ քոյրս այդ-
պիսի բաներ անող չի... հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ:

Սուտ լալով սկսեց ծընկները ծեծել: Թագա-
ւորազը, որ մորթում ամանուկին տեսնելով մը-
նացել էր քարացած, երբ նկատեց, որ էլի իրա-
բրոջն է մեղադրում, կնկանն ասեց.

— Ա՛խր ինչո՞վ ես իմանում, որ նա է ա-
րել. ինչո՞ւ ես հոգիդ այրում, չոր փայտին ա-
րիւն քսում: Ասենք քոյրս չի, օտարի մէկն է, հէնց
պիտի դուր խօսելով միշտ կրակում պահէս: Չէ՞
որ նրան էլ Աստուած է ստեղծել: Նրա մասին
էլ ինձնից հաշիւ կըպահանջուի: Ինչո՞ւ չես վերջ
տալիս նախանձիդ: Ես էլ եմ տեսնում, որ մի-

անիրաւութիւն է արուած, հատիկ որդիս մոր-
թուած է, աշխատենք, որ յանցաւորին գտնենք, ոչ
թէ անմեղին կրակը դնենք: Քոյրս հօ յիմարացել,
միսը չի կերել, որ այգալիսի բան անի: Քոյր չէ,
եթէ աչքիս լոյսը լինի՝ արդար դատաստան անե-
լուց ետ չեմ կենալ:

—Ո՞վ կըթողնի, որ ետ կենաս, ո՞վ իրան
որդուց հեշտութիւնով ձեռ կը վերցնի: Այդքան
որ պաշտպանում ես քրոջդ, ասեց կինը, ձեռիդ
մէջից հոտ ես կալել, որ նա արդար է:

—Հապա դու ձեռիդ մէջից հոտ ես կալել,
որ նա է մեղաւորը: Ինչո՞վ ես իմանում, որ նա
է սպանել, առարկեց մարդը:

—Կարելի է նրա հոգին քեզանից լաւ եմ
ճանաչում, որ ասում եմ. թէ չէ գուր խօսելը
եւ չեմ գիտում, որ Աստծու դէմ է: Ուզում ես
կանչիր քո ծակծակոտուած քրոջը, հարցու-փորձ
արա, հէնց խօսալուց կերևայ:

—Այստեղ ո՞ւր կանչենք, գնանք իրան մօտ,
ասեց թագաւորազը և կնկայ հետ մօտաւ Աղունի-
կի ննջարանը: Աղջիկը հրեշտակի պէս խաղաղ
քնած էր. եղբայրը վրդովուած սրտով «Աղունիկ»
կանչեց. քոյրը շարժուեց, անկողնում նստեց.
սկսեց աչքերը հաղաղել, որ բազրը քունը փախց-
նի: Հարսը ետնից ներս մտնելով ժամանակ չը
տուեց, որ եղբայրը երկրորդ անգամ կանչի. կա-
տաղած յարձակուեց Աղունիկի վրայ և քնեռակին
դմբուկով շրջափառելով ճղղաց:

—Տես, ո՞նց է սուտ քուն մտել, պրճոկուած
սկսւթողը:

Մինչև խեղճ աղջիկը վեր կըթռչէր դմբուկի
սաստիկ ցաւից, հարսը ձեռը մեկնեց ու նրա
շորի գրպանից արիւնոտ դանակը հանեց.

—Ես որ ասում էի, չէիր հաւատում. հիմի
քոյրդ է, թէ չէ: Ել կ'ասեմ, թէ չոր փայտին
արիւն եմ քսում: Փնփն Աստծու, նշանը գտնուեց:

Թագաւորազը մնաց փէտացած, կանգնած.
աչքի տեսածին չէր հաւատում:

—Ի՞նչ ես, լուռել, ասեց մարդուն, էլի մը-
տածում ես, որ քրոջդ պաշտպանեմ: Ձէ, հնար
չըկայ, մտածելու ժամանակն անցկացաւ, որդի
եմ կորցրել, այս ըոպէիս որդուս արիւնը տնւր:

Այս ասելով տալին քաջքշելով բերեց օրօրո-
ցի մօտ: Աղունիկը երբ արիւնոտ դանակը իրա-
գրպանից հանելիս տեսաւ, այժմ էլ արիւնշաղախ
մանուկին, սարսափից մնաց ծմբանը կտրած,
պապանձուած: Խելքը կորցրածի նման մէկ դա-
նակին էր նայում, մէկ օրօրոցին:

Հարսը ընդհակառակը մի ըոպէ չէր լուում,
անդադար գոռում էր, Աղունիկի վրայ մեղադրանք-
ներ դնում և պահանջում.

—Ինչպէս դա որդուս մորթել է ու սիրտըս
խորովել, դրան էլ պիտի մորթես աչքիս առաջ,
սիրտս հովանայ, թէ չէ ձեռ վերցնողը չեմ:

Թագաւորազը տեսնում էր, որ այս ամենի
դէմ քոյրը լուում է, աւելի էր տխրում: Դրանից

ձգրակացնում էր, որ ճշմարիտ նրա արածն է.
չէր ուզում երես երեսի հետը խօսել. շուռ եկաւ
ու ասեց.

—Այ դու, քարասիրտ, եթէ հարսիդ չէիր
խղճում, գոնէ ինձ խղճայիր, որ քեզ գլխիս հա-
ւասար սիրում էի: Խղճմըտանքիդ ի՞նչ էիր ա-
սում, որ անմեղ մանուկին անողորմաբար սուրն
էիր քաշում:

Աղունիկը պուրնդէ պուրնդ լցուած ամանի
պէս եղբօր այդ խօսքերի վրայ սկսեց թնգթն-
գալ, հեկեկալ, աչքերից աղի-աղի վէր ածել և
հեան էլ լալով ասել.

—Հաւատա՛ Աստծուն, եղբայր, ես չեմ մոր-
թել քո որդուն: Ես ինչպէս կարող էի այդ ա-
նել, երբ նրան ինքս էլ սիրում, փայփայում էի:
Ես այդպիսի անգութ բան չէի կարող մտածել:
Անմեղ եմ, խղճա՛ ինձ, եղբայր, մի հաւատալ, որ
քոյրդ կարող է անմեղ մանուկի վրայ սուր
բարձրացնել: Կինըդ նախանձից ինձ հետ թշնամի
է, նրա խօսքին մի լսիր:

—Եթէ դու անմեղ ես, հարցրեց եղբայրը,
հապա արիւնոտ դանակը քո գրպանում ի՞նչ էր
չինում:

—Հա, այդ հարցրու է, վրայ բերեց հարսը:

—Աստծուն հաւատա՛, եղբայր, մանուկին
մատով չեմ դիպել, ինչ թէ դանակով: Չեմ էլ
իմանում, թէ ո՞վ է դրել գրպանս:

—Հապա ո՞վ է մորթել, կատաղածի պէս



897.99
R-17

յարձակուում էր հարսը. պալատի մէջ բացի քե-
զանից մենք երկուս եմք: Քո ասելով դուրս է
գալիս, որ մանուկին կամ ես պիտի սպանած
լինեմ կամ սա: Դէ, տեսնում ես, թէ անգգաւ
քոյրդ մինչև ուր է հասցնում իրա լրբութիւնը:
Համարձակուում է մտքովն անցկացնել, որ մեր
մանուկին մենք մորթած կըլինենք: Բաւական է,
էլ համբերութիւն չունեմ, եթէ դու քո քրոջը
չես պատժիլ ինչպէս արժանն է, նշանակում է,
կողմնապահ ես, մարդասպանի պաշտպան ես, քո
պալատումը մի օր էլ չեմ կենալ:

6. Նորայրն ի՞նչ դարձաւ քրոջ համար

Թագաւորազը մնացել էր երկու կրակի մէջ-
չէր իմանում՝ քրոջ աղաչանքներին լսի, թէ կըն-
կայ սպառնալիքներին, արդեօք կնկանից անցկե-
նայ, թէ քրոջից: Կնիկը թուրը ձեռին պահանջում
էր, որ եղբայրն անպատճառ քրոջ վիզը կտրի:

Աղունիկն այս լսելով այնպէս էր մղկերտում,
այնպէս գլուխն ու արեւը վէր թակում, որ լեռ
քարերն անգամ կըփխրուէին: Նորայրն ուզում
էր քրոջը պաշտպանի, բայց վախենում էր կըն-
կանից, որ ժողովրդի առաջ անունը չըկտորի:
Արիւնոտ նշանն էլ ծածկել չէր լինիլ: Իրա մէջ
վճռում էր, որ քոյրը պատժուի, որովհետեւ ինքն
էլ իբրեւ հայր ցաւում էր իրա կորած որդու
վրայ: Կնկայ պահանջը խիստ էր գտնում, ու-

զում էր իրա աշխարհի օրէնքի համաձայն մե-
ղաւորի ձեռները բաղուկից կտրել ու թողնել:

Այս վճիռը երբ որ Աղունիկը լսեց, զարհուրը
սիրան առած այնպէս ծղրտաց ու մա՛րիկ կան-
չեց, որ կասես լերդն ու թոքը բերանով դուրս
եկաւ:

— Ա՛խ, մայրիկ ջան, աչքդ բաց արա, գե-
րեզմանից տես, ինչպէս է շարժարում ինձ եղ-
բայրս: Դու սրան պահ տուի՛ր, որ ինձ մեծաց-
նի, մուրազիս հասցնի, հիմի անքան քաւասիրտ
է դառել, որ կնկայ խօսքով ուզում է ձեռս տա-
կից կտրել: Ա՛խ, մայրիկ ջան, մի՛թէ դու չըզի-
տես, որ ես անմեղ եմ: Մի՛թէ եղբայրն այսքան
անգութ կըլինի, որ հատիկ քրոջ քամբադդու-
թիւնն ուզենայ:

Մինչև որ Աղունիկն այսպէս լալով իրա
հանգուցեալ մօր հետ էր խօսում, մագերը պո-
կում, ծընկները ջարդում, չար հարսն անգոհ մը-
նալով ամուսնու արած վճռից գոռում էր.

— Թագաւոր, հէնց իմացիր, ես կինըդ չեմ,
օտարի մէկն եմ. քոյրդդ որդուս սպանել է, պա-
հանջում եմ քեզանից՝ կամ որդիս կենդանացրու-
կամ արիւնի փոխը տուր:

Թագաւորազը դատաստանը զցեց հետեւեալ
օրուան, քրոջ թիկերը կապկապած գրեց բանդը
և հրամայեց, որ բոլոր մեծամեծներն ու պալա-
տականները առաւօտը ներկայ լինեն պատժին:
Ով լսեց այդ բանը, ափսոսաց աղջկայ վրայ-

շատերը հաւատացած էին, որ եղբայրը վերջին լուսնում կընէր ըրոջը կամ ամենամեծ պատիժն այն կըտայ, որ պալատից դուրս կանի: Դա մեծ ցաւ չէր լինի, Աղունիկն այնքան գեղեցիկ էր,



որ նրան ամեն մի երիտասարդ առանց բաժին-քի կուղէր:

Դեռ լոյսը չըբացուած հըապարակը մարդ-

կանցով լիքն էր: Հաւաքուեցին մեծամեծները, երեսց թագաւորազը տխուր դէմքով: Դահլճները բերին Աղունիկին սև շոր հագցրած: Երկու ձեռն էլ մէջքին իրար հետ կապկաւած էր: Հանդիսա-կան կնանիք թէ աղջիկներ՝ ամենն էլ նրան այդ օրում տեսնելիս լաց եղան:

Հարսը նետ-օձի պէս սուտ օղիկ-մօղիկ էր գալիս, գլխին վայ տալով կանչում.

— Թագաւոր, կամ որդիս կենդանացրու կամ արիւնի փոխը տուր:

Աղունիկը շատ լալուց ուժաստատ էր եղել. սրտի կսկըծից ձայնը խզուել, թուլացել էր, ոյժ չունէր խնդրելու կամ իրան արդարացնելու: Նրա համար մեծամեծներից շատերը բարեխօսե-ցին, բայց եղբայրը քարասրտած ոչովի խնդիր չէր լսում: Մի ձայնի նա ասում էր.

— Ես արդարութեան ծառան եմ: Արդարու-թիւնը պահանջում է մեղաւորին պատժել: Այս դէպքում մեղաւորը իմ քոյրն է, որովհետև նրա մօտ է գտնուել դանակը: Արդարութիւնից չեմ կարող անցկենալ, յանցաւորը պիտի պատժուի: Այս է վճիռս:

Ամենն էլ լռեցին: Դահլճներից երկուսը կոճղը բերին և սկսեցին դետնի վրայ ամրացնել, որ ձեռները վրէն կտրեն: Դահլճի մինն էլ կացինն էր սրում:

Աղունիկը աչքերը՝ երկինք բարձրացրեց ու ասեց.

—Այն, Աստուած, ես ինչ եմ արել, որ ինձ պատժել ես տալիս: Չէ՞ որ Շէն թագաւորը բարութիւն ու ողորմութիւն տալիս իմ ձեռովը էր բաժանում. մայրս նոյնպէս աղքատի ու ար-նանկի իմ ձեռով էր օգնում, որ ես սովորեմ քեզ հաճելի բաները և նրանց ճամբովը դնամ: Նրանց մահից ետ, արարիչ Աստուած, Քեզ յայտ-նի է, թէ ինչպէս եմ կատարել նրանց պատուէր-ները, բարի խրատները: Մի՞թէ այս պատուհասն է իմ վարձատրութիւնը: Մի եղբայր ունեմ, Աստուած իմ, նա պիտի ինձ՝ անմեղիս պաշտ-պանի, ինձանից փորձանքները հեռացնի, բայց իմ լացն ու կոծը նրա սրտին չեն ազդում, նա ինձ համար օտարացել է: Էլ ոչով չունեմ բացի Քեզանից, Աստուած, Քո փէշն եմ բռնել, Դու ինձ անօգնական չըկորցնես...

Դեռ խօսքը չէր վերջացրել, դահիճները թագաւորի հրամանով մօտեցան, Աղունիկին բռ-նեցին, որ բերեն կոճղի մօտ:

Աղջիկը ծվաց, կապկպած կռներով ուզեց ընդդիմանալ դահիճներին, բայց թագաւորազը յանկարծ գոռաց կատաղած դէմքով.

—Քեզ հրամայում են առանց ընդդիմու-թեան գնաս, թէ չէ կացինը վզիդ կըգնեն:

Այս սպառնալիքի վրայ Աղունիկի կռները թուլացան, երկիւղից սրտի մէջ արիւնը թան դա-ռաւ: Հնազանդուեց անձայն, դահիճները տարան կոճղի մօտ:

Կատաղութիւնից թագաւորազի երեսին դոյն չըկար, կացինն ինքը առաւ: Աղունիկի աչքերը կապած էր: Կացինը պսպրկաց, երկու փափլիկ բազուկներ թռչելով ընկան չար հարսի ոտների առաջը:

—Տարէք, հեռացրէք, հրամայեց եղբայրը, այլևս դրա երեսը չըտեսնեմ: Դրան տուն ու օթեան տուողը դառը մահով կըմեռնի: Թողէք դաշտերում այնքան թափառի, որ սովամահ լի-նելով գաղանձների կեր դառնայ:

Աղունիկը ուշադնայ էր եղել, երեսին ջուր տալով ետ բերին. դահիճները չըթողին, ոչ որ հետը խօսի, առանց կարգին հագուստի արիւն-դուիկ թևերով տարան քաղաքից դուրս:

Ովքեր ճանաչում էին, խղճում էին, ովքեր չէ, նզովում էին: Իսկ մանուկները քարերով հալածելով քշեցին Աղունիկին շատ հեռու:

Հարսն այս բանից ետ քաշուեց իրա սենեակը: Փափազը կատարուել էր, սկսեց դիւ պէս ուրա-խանալ և ամուսնուց ծածուկ թռչկոտալ, պար գալ:

Ճ. Կոնատուած Աղունիկը ո՞րտեղ թափառեց

Դահիճներից մինը երկար տեղ հետևեց Ա-ղունիկին. նա գութ ունէր սրտումը: Երբ էլ ոչ օք չկար, խնդրեց Աղունիկին, որ կանգնի. ա-րիւնը կտրելու համար փոշի ցանեց, յետոյ իրա

շորերից մինը պատուտեց, փաթաթեց կոներն ու ինքը տխուր-տրտում դարձաւ քաղաք։

Աստուած լինի Աղունիկի հետ, վերջին անգամ ետ նայեց այն քաղաքին, ուր ինքը ծնուել, մեծացել էր։ Ծնողներին մտաբերելով լաց եղաւ. եղբօրն ու հարսին յիշելով՝ դառնութիւնով երեսը շուռ տուեց։ Կտրուած թևերը փէշում փաթաթած առաջ ընթացաւ։

Գնում էր, բայց չէր իմանում, ուր է գնում։ Քանի որ ոյժ կար ոտներում, առանց հանդատանալու գնաց, արևը մայր մտնելիս երբ յօգնութիւն դգաց, կանգնեց։

Առջևը տարածւում էր մի անսահման դաշտ, ինքը մէջը միայնակ։ Սիրտն ու աչքերը արտասուքով լցրած դարձաւ երկնքին ու ասեց.

—Արարիչ Աստուած, հօ Քեզ յայտնի է իմ արդարութիւնը։ Եթէ մազի չափ մեղաւոր եմ՝ կոներս կտրելու մէջ, աղաչում եմ, երկնքի՝ կայծակն ինձնից չըխնայես։ Թող յանկարծամահ լինեմ, երկրի վրայ Քու աչքին չերևամ։ Իսկ եթէ արդար եմ, Դու ինձ չըկորցնես։ Աստուծոյ Քեզ եմ գցել. Աստուած, այնքան շունչս վրէս պահես, որ ճշմարտութիւնն երևայ, եղբայրս իրա արած սխալը զղջայ և նախանձոտ հարսըս իրա արժանի պատիժն ստանայ։

Գիշերը վրայ էր հասնում, Աղունիկն անհանգիստ էր, առաջին անգամ էր, որ բացօթեայ պիտի գիշերէր առանց ծածկոցի, առանց փռոցի։

Կոներն այնքան էին ցաւում, կսկըծում, որ ահա ու մահը մտից ընկել էր։ Տեսաւ որ հնար չըկայ, թևերը չըմրսացնելու համար տաք աւազի մէջ թաղեց մինչև ուսերն ու բերանովէր պարկած մտածեց, մտածեց, նղղեց ու քնեց։

Առաւօտն այն ժամանակ աչքերը բաց արեց, երբ արևն ընկել էր թիկունքին, տաքացնում էր։ Վերկացաւ ու թափառելով շարունակեց գնալ։ Ազամորդու չէր ուզում երևալ, ամաչում էր։ Հէնց որ շնչաւորի գլուխ էր տեսնում, կամ բոյսերի ետն էր թաղնում կամ քարերի։

Շատ ու քիչ գնալն Աստուած գիտէ, միայն օրեր ու շաբաթներ անցնելուց ետ թևերի կտրուած տեղերը սկսել էին ծածկուել մսով։

Դէսուդէն թափառելուց ետ մօտեցաւ մի շինութեան։ Դա ջաղաց էր, առջին ընդարձակ բանջարանոց, շրջապատած բարձր ցանկով, ցանկերի տակ մեծ-մեծ ժախունի բսած։ Աղունիկը մի կերպ մտաւ այդ բանջարանոցը և մի թագուն տեղ պատասպարուեց։

Իրա պատասպարանից տեսնում էր ջաղացպանին և ամեն եկող-գնացողին, բայց ինքն ոչովի չէր երևում։ Յերեկով տեղից չէր շարժւում, արեահատիկի գլուխը գոգը դրած էր, երբ ուզում էր հացի ճոթի պէս տանում էր բերանը, ատամներով պոկում։

Երբ որ մութն ընկնում էր, Աղունիկը պահուած տեղից կամաց-կամաց դուրս էր գալիս,



մտնում բանջարանոցը: Մասներ չունէր, որ
ձմերուկը, սելը բունէր, կտրէր կամ կտորէր.

Քսեղճը ճարահատեալ բերանսիւմեր ընկնում էր ու
կրիայի պէս կրծոտում: Երկար ժամանակ այս-
պէս զգոյշ մտնում էր բանջարանոցը, կրծելով
կշտանում և առանց նկատուելու հեռանում իրա
պատասպարանը: Զաղացական բանջարանոցը լուսով
ման գալիս նկատել էր, որ սելս ձմերուկը այստեղ,
այնտեղ կիսով չափ կերած, կրծկուրծած թողած
է: Մի քանի գիշեր անքուն պահպանութիւն ա-
րեց, որ իմանայ անողը կրիայ է թէ նապաս-
տակ, բայց ոչ սողունի պատահեց, ոչ անասու-
նի: Ընկաւ մտածմունքի մէջ, չէր իմանում ինչ
պատասխան տայ իրա տիրոջը: Տէրը Զէն թա-
գաւորի տղէն էր, որ նրա վատ բաղդից այդ օր
որս էր եկել ջաղացի մօտ:

Գնաց վախվախելով իմաց արեց.

— Թագաւորագն ապրած կենայ, բա՛ չեմ
ասիլ, բանջարանոցին այսպէս, այսպէս զնաս է
հասնում: Շատ եմ աշխատել անողին բռնեմ, չի
յաջողուել: Չեմ իմանում ինչ բան է, ինչ հան-
գի գաղան է, որ ճանկ չի ընկնում:

Թագաւորազը, որ երևելի որսկան էր, ու-
շադիր լսելուց ետ պատասխանեց.

— Դու միամիտ բո գործին գնա, ջաղացիդ
հետեի, հիմի ես կըգամ, տեսնեմ ո՞նց է ազատ-
ւում բանջարանոցիս գողը:

Նետ ու աղեղն առաւ, մտաւ բանջարանոցը,
թագնուեց և աղեղի վրայ նետը սարած պահեց:
Մինչև պինդ մթնելը սպասեց, բան չերևաց.

Ասեց.— ապա սեմ, կարելի է գիշերը լոյս
ընկնի, ով որ է:

8. Աստուած ո՞ւմ հանդիպեցրեց նրան

Ապասեց, մէկ էլ տեսաւ կէս գիշերին մի
աղամորդու պատկեր շարժուեց բանջարանոցի
ծայրում: Զգոյշ ու կամաց առաջ եկաւ, երբ
հասաւ լաւ ձմերուկի մօտ, երեսի վրայ ընկաւ
և ազահաբար կրծոտեց: Զէն թագաւորազը քիչ
համբերելուց ետ գէպի նստ ծղրտաց.

— Էհէյ, ով ես, շուտ ձայն հանիր, թէ չէ
հոգիդ թաւաւ:

— Աղամորդի եմ, մեղք արի, եղաւ ծղրտո-
ցի պատասխանը:

— Ի՞նչ աղամորդի ես, շուտ ասա, թէ չէ...

— Աղջիկ եմ, աղջիկ, գիշերուայ լուսթեան
մէջ լսուեց մի բարակ ձայն:

— Առաջ արի, ի՞նչ աղջիկ ես, խիստ ձայ-
նով խօսեց թագաւորազը:

— Ձեմ կարող, մերկ եմ:

Դաշտում ու ձորում երկար թափառելուց
Աղունիկի շրեքը գզգզուել, մաշուել էին: Զէն
թագաւորազը աղջկայ վերջին պատասխանի վրայ
մեղմացած ետ դարձաւ ջաղացը, երկար վերաբ-
կուն հանեց, ջաղացպանին տալով ասեց:

— Գնա շուտով բանջարանոց, այստեղ մի
կինարմատ կայ, այս վերաբկուն տո՛ւր իրան

հագնի, յետոյ առաջնորդիւ այստեղ:

Ինչպէս ասաց, այնպէս էլ կատարուեց: Մի-
քանի ընթացիկ ետ թագաւորազն իրա առջև տե-
սաւ մի սիրուն, անմահ աղջիկ կանգնած: Կը-
տրտած թեքը որ տեսաւ, ջանը դող ընկաւ:
Շէնք ու շնորքին նայելուց ետ կունքը տեսնե-
լով սրտի քիթը մղկըտաց.

— Գոյրիկ, հարցրեց թագաւորազը, դու ով,
այստեղ ով: Գիշեր ժամանակ ի՞նչ ունես բան-
ջարանոցում, ի՞նչպէս ես ընկել այս կողմերը:

— Ես մի անտէր, անտիրական աղջիկ եմ:

— Բայց դու ծնող ունեցած կըլինես, ով ես:
Ինչո՞ւ ես քեզ անբաղտացրել, կարելի՞ է, որ ասես:
Քիչ լռելուց ետ Աղունիկը պատասխանեց.

— Երբոր հետաքրքրում ես իմ վիճակով,
կասեմ, միայն խնդրում եմ որ ոչ ով մեզ չըլսի:
Թագաւորազը ջաղացպանին դուրս ուղար-
կեց: Աղունիկը հասեց, իրա գլխով անցածը միառ-
մի պատմեց: Թագաւորազը զգացուել էր: Գե-
ղեցկութիւնը դիտելուց ետ երբ լսեց, որ կըռ-
նատուած աղջիկը Շէն թագաւորի գաւառն է,
դարձաւ գէպի նստ և խորը հառաչելով ասեց.

— Առաքինի աղջիկ, դու չես եկել այստեղ,
այլ Աստուած է, որ առաջնորդել բերել է իմ
կալուածը: Անցածի վրայ մի մտածիլ, դու
իմ բաղդն ես, որ Աստուած հանդիպեցրել է
ինձ: Էգուցուանից դու կըլինես Զէն թագաւորի
հարսը:

897.99
B-17

Աղունիկը շնորհակալութեան աեղ կռացաւ նրա ոտը համբուրեց: Թագաւորազը այդ գիշեր ջաղացում մնաց, յետոյ առաւօտը նրան իրա հետ վերցրած գնաց հօր պալատը և այսպէս խօսեց.

— Հայր իմ, այս գիշեր մեր բանջարանոցի մէջ գտել եմ այս աղջկան. հաւանել եմ, պիտի ուզեմ, ի՞նչ ես ասում:

Էլ հօրը չասեց, թէ ո՞վ է կամ ո՞ւմ աղջիկն է:

Զէն թագաւորը աղջկայ կոնքերին նայելով բարկացած խօսեց.

— Խելքդ հացի հէտ ես կերել, ի՞նչ է, մի-թէ աշխարհիս աղջիկները քեզ համար կտրուել են, որ այդ կոնատն ես ուզում: Ո՞վ գիտէ, ո՞ւմ տնից է խռկած և ի՞նչ վատ գործի համար են ձեռները կտրել: Ճամբու դիր գնայ, գլխները ցս հեռանայ:

— Ո՛չ, հայր իմ, ընդգիմացաւ որդին, խօսք եմ տուել, պիտի պսակուեմ: Աստծու կամքին չեմ հակառակիլ, սա նրա ուղարկած բաղդն է:

Հայրը շատ բան ասեց, որդին չըլսեց: Հէնց մի ձայնի ասում էր՝ իմ ասածը պիտի լինի: Հայրը վաղուց իմանալով իրա որդու ներհակ բնաւորութիւնը, անօգուտ համարեց վիճելը.

— Թող քո ասածը լինի, որդի, բայց եթէ վերջը փոշմանես, այն ժամանակ ես գործ՝ չունեմ:

— Հա՛, դու գործ մի ունենալ, թող ես փոշմանեմ, ասեց որդին ու ուրախ դուրս եկաւ:

Հարսանիքի պատրաստութիւնը տեսնուած

էր և անթիւ բաղմութիւն ժողովուած: Հօր և բարեկամների ներկայութեամբ թագաւորազը դարձաւ աղջկանն ասեց.

— Դու տեսնում ես, որ հօրս կամքի հակառակ քեզ կին եմ ուզում: Ասա՛ տեսեմ, ինչո՞ւ պիտի պարզերես անես ինձ աշխարհիս միջին:

Աղունիկը նեղ տեղն էր, չըզիտէր բաղմութեան առաջ ի՞նչ ասի, որ սուտ չըդուրս գայ: Էլի յոյսը զցեց Աստծուն ու կարմրելով խօսեց.

— Ես ոչ փողով կարող եմ պարծենալ, ոչ բաժինքով: Եթէ ուրիշները չասեն, ինքս գիտեմ, որ ես մսի գնդի պէս բան եմ առանց ձեռների: Բայց դու, որ այս բոլորը իմանալով դարձեալ ինձ փառքի ու բաղաւորութեան ես արժանացնում, ես էլ Աստծու յուսով տարուայ վերջը քեզ երկու ոսկեքոչոր տղայ կըտամ:

— Դրանից էլ թանկ ընծայ ո՞րը կըլինի, տայ Աստուած որ խոստումդ կատարուի, խնդումով պատասխանեց թագաւորազը. երկնքից մինչև գետինք շնորհակալ կըլինեմ քեզանից:

Հարսանիքը եօթն օր, եօթը գիշեր քաշեց: Աղունիկին տեսնողներն՝ ամենն էլ ափսոսում էին և ասում. «ճի, երանի կոնքը ողջ լինէին»:

Հարսանիքի օրից դեռ ութ ամիս էր անցկացել, մի բան պատահեց:

Զէն թագաւորը բաշատիրո՞ւ մարդ էր, ծերութեան միջոցին էլ զարհուր էր ազդում հարեւան թագաւորներին: Նա իրա սեպհական աշխար-

հից զատ ուրիշն էլ ունէր, որ պապից էր մնացել. մէկից հարստութիւն էր ստանում, միւսից բաշ մարդիկ:

Յանկարծ լուր բերին, որ պապական աշխարհը ոտնակոխ են անում: Ձէն թագաւորը կրակ կտրած պատրաստութեան եանից կացաւ, որ գնայ յարձակողներին լաւ խրատի, կտրուկ որդին առաջը կտրեց.

— Ինձպէս երիտասարդին ամօթ չի, որ ծեր հօրը պատերազմ ուղարկի: Դու հանգիստ տանը կաց, ես կըգնամ և գիտեմ, թէ ինչ օր կըմըթնացնեմ գլխներին: Միայն քոնն այն լինի, որ Աղունիկին նայես, պահպանես: Նրա ազատութիւն օրերը մօտ են, երբոր Աստուծով ոսկեքոշոր տղաները կըծնուեն, խնդրում եմ գրով ինձ իմաց տաս, որ միամիտ լինեմ:

— Լաւ, ասեց Ձէն թագաւորը, միամիտ գնա: Որդին մնաս բարեւ ասեց Աղունիկին, բաշ զօրականների գլուխն անցած գնաց դէպի իրա պապական աշխարհը:

9. Ո՞վ նորից ամբաղղացրեց Աղունիկին

Քիչ միջոցից ետ Աղունիկն ազատուեց և խոստացած ոսկեքոշոր տղաները բերեց: Թագաւորը խնդաց, աղքատներին պարգևներ բաժանեց, յետոյ նստեց թուղթ գրեց, որ մարդու ձեռով որդուն իմաց անի թէ՛ աչքով լոյս, սրդի, կնիկով

ինչպէս ասել էր, այնպէս էլ կատարուեց:

Աղունիկին շնորհակալութիւն արեց կերսարը. սրտի ուրախութիւնից ինքն էր ծառայում նրան, իսկ նորածին թոռներին գուրգուրելուց, համբուրելուց չէր դադարում:

Թղթատարը ճամբայ ընկաւ դէպի պապական աշխարհը, եթէ երկար ճամբով գնար, ուշ կըհասնէր թագաւորադին, նա ընտրեց կարճ ու դժուար ճամբէն, որ անցնում էր Շէն թագաւորի հողով: Երբ պալատի մօտ հասաւ, թագաւորի ծառան եկաւ թղթատարին ասեց.

— Օ՛տար եղբայր, մեր թագունին բեղ կանչում է:

Թղթատարը առանց հակառակելու գնաց, էլ չիմացաւ, որ կանչողը Աղունիկին կոնատող հարսն է, որին Աստուած պատժել էր արդէն:

Զաւակին մորթելուց ետ չար հարսին որդի չէր ծնւում, ինչքան էլ սրտով փափագում էր: Տեսնելով որ Աստուծո մօտ սեւերես է, իրա խնդիրը չի դուրս գնում, ճարը գցել էր դեղի. բժիշկ մարդիկ ու գիտկան կնանիք դեղ տալուց յոգնել էին, չէր լինում, չէր լինում:

Վերջը ամուսնուն խնդրում էր, որ ուրիշ աշխարհից դեղապետ բերել տայ, բայց նա էլ իրա կնկայ արարմունքներից զգուել կշտացել էր. միշտ այն էր մտածում, թէ ինչո՞ւ քրոջն այնպէս անգութ կերպով դուր պատժեց:

Ամենից ատուած հարսը սովորութիւն էր

արել լուսամուտի առաջ նստել և անցող-դար-
ձողին նայել: Հէնց աչքով օտար մարդ էր ընկ-
նում, իսկոյն կանչել էր տալիս իրա մօտ և
հարցուփորձ անում. արդեօք դեղ ու ճար չը
գիտէն ծննդաբերութեան համար: Այդ օրը օտար
մարդ չէր նկատել, պարապ նստելուց յոգնել,
հէնց ուզում էր լուսամուտի առաջից հեռանալ,
թղթատարն աչքովն ընկաւ: Հարսն իրա մէջ ա-
սեց.

— Այս մարդը կարելի է բժիշկ լինի, եթէ
բժիշկ չըլինի, բժըշկի տեղ կիմանայ, կանչեմ
հարցնեմ:

Ծառան եկաւ յայտնեց, որ օտարականը
դուրսն սպասում է: Հրաման տուեց, որ իրա
մօտ հրաւիրեն:

Թղթատարը ներս եկաւ, խոր գլուխ տուեց:
Թագուհին իրա գէմուդէմը նստացրեց ու խօսք
բաց արեց.

— Օտարական եղբայր, ամօթ չըլինի հարց-
նելը, ի՞նչ մարդ ես, ո՞ւր ես գնում:

— Թագուհին ողջ լինի, ես Ձէն թագաւորի
մարդն եմ, շատ հարկաւոր գործի համար շտա-
պով նամակ եմ տանում նրա երիտասարդ որ-
դուն, որ հիմի իրա պապական աշխարհումն է:

— Կարելի է պատճառն իմանալ շտապով
թուղթ տանելուդ: Ես մտադիր եմ քեզ մի քանի
օր հիւր պահեմ, շատ հարկաւոր բանի համար
հարցումներ ունեմ:

— Եթէ հետաքրքիր ես, ուրախութեամբ կա-
սեմ, թէ ինչի եմ շտապում: Կարելի է լսած էր
լինես, թէ Ձէն թագաւորազը ինչպէս էր մի
կռնատ աղջիկ գտել գիշեր ժամանակ բանջարա-
նոցի մէջ: Առանց իմանալու թէ ո՞վ է, կամ
ո՞ւմ աղջիկն է, մեր թագաւորազը նրա սիրու-
նութեանը հաւանելով եկաւ հօրն ասեց. — հայր
իմ, թող սրա հետ պսակուեմ: Հայրը շատ ընդ-
դիմացաւ, բայց չըկարողացաւ որդուն իրա մտադ-
րութիւնից ետ կացնել, վերջը յօժարուեց: Տղէն
էլ պսակուելիս աղջկանն ասեց. — քեզ նման ա-
րատաւորին կին եմ ուզում, ինչո՞վ պիտի ինձ
պարգեւես անես աշխարհի մէջ: — Աղջիկն ասեց.
— Ես էլ քո լաւութեան փոխարէն երկու ոսկե-
քոչոր տղայ կըտամ տարու գլխին: Տարին բոլորուել
է, աղջիկը իրա խօսքի համաձայն որդիքը բերել
է: Ուրախացած հայրը որդուն աչքալոյս է ու-
ղարկում, որ միամիտ լինի: Պատուիրել են ա-
ռանց մի տեղ միուլ անելու ճամբայ կտրեմ: Ինձ
մի ուշացնիլ, թող որ քանի լոյս է, գնամ, օթեան
գտնեմ, ողորմած թագուհի, որ էգուց արլորա-
կանչին ճամբայ ընկնեմ գէպի թագաւորազս:

— Այ օտարական եղբայր, խորամանկ ժպի-
տով վրայ բերեց հարսը, այնպիսի ուրախալի
համբաւ ասիր, որ մէկի փոխարէն հարիւր հիւր
կըպահեմ Ձէն թագաւորի պատուի համար: Թա-
գաւորի թղթատարին ինչ սազ կըգայ, որ գնայ գո-
մում իջեանի: Աւելի լաւ չի՞ պալատում հանգըս-

տանտ, ուր ամեն ինչ պատրաստ է: Վաղն ինչ
ժամանակ կուգես, ճամբոյ ընկիր, Աստուած
քեզ հետ:

— Կեանքդ երկար լինի, ողորմած թագուհի,
պատասխանեց թղթատարը, երբ հրամայում ես,
կըմնամ: Բայց իմ պարտքը լինի այս քաղցր հիւ-
րասիրութեան մասին Զէն թագաւորին յայտնելը:

— Այս ինչ հիւրասիրութիւն է, որ թագա-
ւորին կամ նրա որդուն ասելն աթենայ, Հեռա-
ւոր ճամբորդին օթեան ու կերակուր տալը ա-
մեն մէկի պարտքն է: — Ե՛յ, ծառաներ, գոչեց
հարսը, շուտով այս պատուական հիւրին տարէք
Վոզքի սենեակը, ինչպէս հարկն է. լաւ իրիկնահայ
տուէք, կողէնքների ամենաընտիրը փռեցէք:

Իսկոյն հրամանը կատարուեց:

Հասաւ գիշերը. Պալատում ամենն էլ հան-
գիստ քնած էին, միայն մի հոգի էր գարթուն.
Դա չար հարսն էր. զգոյշ կատուի պէս ոտի
քթերի վրայ դնում էր թղթատարի սենեակի
դռանը ականջ դնում, ետ գալիս: Թղթատարը
ոտով երկար ճամբայ դալուց ջարդուել, խոր
քուն էր մտել: Հարսը վերջին անգամ լսելով որ
փշշոցի ձայն է գալիս, իմացաւ, որ քաղցր քնի
մէջ է, սիրտ արաւ, դուռը բաց արեց ու սենեա-
կի մէջ նրա հագուստը բըբըրելով գրպանից նա-
մակը հանեց ու շտապով դարձաւ իրա սենեակը:

Նամակի ծալը ետ տուեց, ճրագի տակ կալ-
գաց ու մաղձոտ երեսով խօսեց.

— Ես կարծում էի, թէ դաշտերում գայլերի
ու ագռաւների կեր ես դառել, իմ աչքի փուշ.
միթէ դեռ կենդանի ես և այն էլ Զէն թագա-
ւորի տանը: Սպասիր, մինչև վերջապէս քո ա-
րեւը իմ ձեռով չըխաւարի, դու ինձ հանգիստ
չես տալ:

Նստեց ուրիշ թղթի վրայ այս խօսքերը
գրեց.

«Անքաղղ որդեա՛կ.

Ամօթ ու խայտառակութիւն եղաւ իմ անու-
նին: Կոնատ կինդ ազատուեց եւ երկու լակոտ
ընրեց: Ի՞նչ անեմ, շուտով մի քան ասա: Պա-
հե՞մ թէ գետնաթաղ անեմ:

Քո վշտալի հայր Զէն թագաւոր»:

Առաջուայ նամակի պէս ծալեց ու զգու-
շութիւնով տարաւ շորի գրպանը դրեց:

Առաւօտը դեռ չըլուսացած միամիտ թղթա-
տարը զարթեց ու իրա արևի սրտով ճամբէն
շարունակեց:

Շատ գնաց, թէ քիչ, հասաւ թագաւորադին.
բարեկեց, ուրախ-ուրախ նամակը նրան մեկնեց.
սպասում էր, որ իսկոյն կուրախանայ և թանկա-
զին պարգև կըտայ, բայց զարմացաւ, թէ ինչի
իրա տէրը նամակը կարգալիս ուրախանալու փո-
խարէն չափազանց տխրեց:

Թղթատարը մնաց անկմանի եղած ու մտամո-
լոր: Վախենում էր թէ պատճառը հարցնի թա-

գաւորագիր, սպասուում էր, որ առաջ նա խօսի: Բայց
թագաւորազը սրտակոտոր և անձայն քաշուեց
իրա սենեակը, քիչ լաց եղաւ ու յետոյ թղթին
պատասխան գրեց: Թղթատարին առատօրէն վար-
ձատրեց ու պատուիրեց, որ շուտ հօրը հասցնի
նամակը:

— Շատ բարի կըլինի, ասեց թղթատարը՝
ու նամակը գրպանը դնելով վերագարձաւ դէպի
Զէն թագաւորը: Իրա մտքում խօսուում էր. «Կարճ
ճամբով գնամ, թէ երկար—կարճ ճամբով գնամ,
թէ երկար»: Մի բանի անգամ կրկնելուց ետ
վճռեց.

— Էհ, կարճով գնամ: Ինչ ւրած, որ քիչ
բարբարուտ է, բայց որ հիւրասէր թագուհու մօտ
կիջնեմ, քաղցը զրոյց կանեմ, միթէ քիչ բան է:

Ասեց ու արեց թղթատարը. եկած ճամբով
դարձաւ և ուղղակի չար հարսի տանն իջաւ, ու
գիշերը մնայ, էգսը գնայ:

Նենգաւոր հարսը անհամբեր նրան սպասում
էր. քաղցը ընդունեց, հարցրեց նրա ողջութիւ-
նից, թագաւորագի ողջութիւնից, յետոյ իրիկունն
իրա ձեռով լաւ ուտացնելով, խմացնելով քնաց-
րեց:

Գիշերուայ կիսին միայն հարսն էր ոտի
վրայ. սա զգոյշ մտաւ թղթատարի սենեակը,
նամակը գրպանից հանեց, վռադ իրա սենեակը
տարաւ, կարդաց ու բարկութիւնից պատռելով,
նրա տեղ նորը գրեց այս խօսքերով.

«Հայր իմ».

Այնքան քարկացած եմ, որ չեմ կարող
գրով յայտնել, միայն այսքանը կասեմ, որ նամա-
կըս իրիկունը հասնի քեզ, իրիկունն սպանի մօրն
ու իրա որդկերանց, առաւօտը հասնի՝ առաւօտը:
Միայն թէ որ գամ, դրանց երեսը չըտեսնեմ:

Քո քամքաղդ որդի»:

Տարաւ զգոյշ կերպով դրեց թղթատարի
գրպանը և ինքը քաշուեց քնելու:

Թղթատարը վաղ-վաղ դարթեց և իրա աշ-
խարհի ճամբէն բռնեց. հասաւ թագաւորի մօտ,
նամակը տուեց:

10. Աղունիկը զաւակների հետ ո՞ր գնաց

Զէն թագաւորն ուրախ բաց արեց, բայց
աչքը գրածին առնելուն պէս մահուան դող եկաւ
վրէն. երեսը սփարթնեց, աչքերը կայծակին
տուեց, ձեռով մագերից բռնեց ու ծկրլթաց.

— Այս ինչ է գրած, Աստուած իմ, Միթէ
աչքերս լաւ չեն տեսնում:

Աչքերը տրորելով մէկի տեղ երեք անգամ
վարդաց, դարձեալ միևնոյնն էր: Զիմացաւ ինչ-
պէս բացատրի որդու գրածի միտքը. մնաց շուա-
քածի պէս կանգնած:

— Ի՞նչպէս հարսիս մօտ գնամ: Գնամ էլ,

լինչ ասեմ, որդուս գրածն ինչպէս նրան պատմեմ:

Ամենին զարհուր ազդող թագաւորն ինքը մտքի ծովում մոլորուել էր, խեղճացել: Հէնց որ միտն էր գալիս թէ որդու գրածը կատարելով պիտի պարկեշտ հարսիցն ու սիրուն թուռներից միանգամից զրկուի, մազերը մարմնի վրայ փշաքաղւում էին: Կսկըծից քիչ էր մնում ծերունին խելքը կորցնի, ճարահատած լաց էր լինում ու նրանով սիրտը վէր նստացնում:

Աղունիկը լսել էր, որ թղթատարը եկել է, զարմանում էր թէ ինչո՞ւ կերսարը չի գալիս ու յայտնում մարդու ուղարկած շնորհաւորէքը: Սպասաւորների միջոցով իմաց էր անում, թէ արի ստացած թղթի բովանդակութիւնն ասա, բայց կերսարը երես չէր գալիս:

Վերջը երբ հարսը, մի քանի անգամ դիմելով, կերսարի հոգին ջուր դրեց, նա հարսի առաջ դուրս եկաւ գլուխը բաշ արած ու մորմոքուած սրտով խօսեց.

— Ա՛յ, իմ աչքի լոյս, հայ-հարա ստիպում ես թէ՛ թղթի միջինն ասա, իսկի ստուելու բան է, ա՛ քեզ մատաղ գնամ: Ախր խղճից դուրս բան է ապսպրել որդիս, ես ինչպէս բերան բերեմ: Թուղթն ահա, ա՛ռ, ինքդ կարդա, հասկացիր, թէ ի՞նչ անիրաւ բան է գրել:

Թագաւորը նամակը տուեց, ինքը դուրս գնաց:

Աղունիկը շտապով նամակը բաց անել տուեց՝ կարդաց ու մնաց լռւած: Նայեց ստորագրութեանը, նորից կարդաց ու չիմացաւ թէ ինչո՞ւ



պիտի այդպիսի հրաման ուղարկէր իրա մարդը: Խոր մտածմունքի մէջ ընկած նա այնքան իրա վրայ չէր ցաւում, ինչքան անմեղ երեխաների:

որոնք զուր պիտի կորչէին: Բայց նա իրա մար-
դուն չափազանց սիրում էր, չէր ուզում նրա
հրամանը անկատար թողնել: Զէն թագաւորին
կանչել տուեց ու ասեց.

— Այս նամակ գրողը քո փոքրաւորն է, բայց
իմ գլխի տէրը: Ուխտս այնպէս է, որ նրան հը-
նազանդեմ ինչպէս իմ մեծաւորի: Աղաչում եմ,
նրա հրամանը կատարիր անթերի: Աստուած ի-
մաստուն է, նա փորձանքներով մեղաւորներին
զգուշացնում է և պատիժներով խրատում: Եթէ
Աստծու մատը խառը չի լինիլ այս բանում, թող
որդիդ իրա անգթութեան համար պարտական
մնայ թէ ինձ և թէ այս անմեղ մանուկներին:
Խնդրում եմ, էլ մի ուշացնիլ, կատարիր հրա-
մանը շուտով:

— Քաւ լիցի. պատասխանեց թագաւորը.
աւելի շուտ կուգեմ, որ երկինքը գլխիս փուլ
գայ և ինձ տակով անի, քան թէ յօժարուեմ
ձեռներս անմեղ արիւնի մէջ թաթախել: Ի՞նչ
անեմ, որ սիրելի որդիս է գրողը, չեմ կարող
նրա անիրաւ վճիռը հլութեամբ լսել ու կատա-
րել: Երկար մտածելուց զուլսս էլ իմը չի, բայց
նրա արարմունքից ոչինչ չեմ հասկանում: Ես
վճռել եմ այնպիսի բան անել, որ ոչ նրա խօսքը
գետին ընկնի և ոչ դու ու մանուկներդ կեան-
քից զրկուէք: Թէպէտ իմ ընտրած միջոցն էլ
պակաս ցաւ չի պատճառելու, բայց խելօքութիւն
է զնասի փոքրն ընդունել, քան մեծը: Վեր կաց,

իմ պարկեշտ Աղունիկ, վերցրու մանուկներդ,
Աստուած կանչի ու գնա, ուր որ ուզում ես: Մար-
դուդ առաջ պատասխանատուն ես եմ: Թող ինչ
ցաւ ուզում է գլխիս գայ, միայն ձեզպէս ան-
մեղների մահը աչքովս չըտեսնեմ:

Հետեւեալ առաւօտ Զէն թագաւորը թոռնի-
րին համբուրեց, հեկեկալով տեղաւորեց նրանց
խուրջինի մի աչքում, միւս աչքն էլ պաշարով
լցրեց և Աղունիկի ուսով գցեց:

Խոնարհ հարսը համբուրեց կերսարի աջը և
տխուր-տրտում քաղաքից դուրս եկաւ այն ժա-
մանակ, երբ նրա բոլոր բնակիչները հանգիստ
քնած էին: Շալակի բեռը քաղցր էր ու թեթեւ,
բայց մտածմունքները դառն էին ու մթին: Ա-
ղունիկը ամայի դաշտում կանգ առաւ ու խօսեց.

— Զար բաղդ, էլի նախանձեցիր վիճակիս,
էլի ինձ անտուն, անտէր շինեցիր. մինչև երբ
հալածես, անիրաւ: Նպատակդ ինչ է, հողին
հաւասարել ինձ՝ Շէն թագաւորի անմեղ զաւա-
կին: Զէ, իմացիր, փափագըդ չի կատարուիլ: Երբ
հօրս տնից խուկել տուիր, այն ժամանակ էլի
կարող էիր յոյս ունենալ, որ նեղութիւններով
ինձ կըմաշես, սրտամեռ կանես, այն ժամանակ
ես միայնակ էի, անփորձ էի, բայց հիմի, որ
մայր եմ և երկնքի կամքով երկու անպաշտպան
մանուկների պահապան կարգուած, խելքդ ի՞նչ
է կտրում, եթէ աշխարհիս զրկանքները, տառա-
պանքները ժողովես, միանգամից գլխիս թափես,

միթէ ես կըխոնարհուեմ, միթէ մազաչափ կը վնասեմ: Չէ, չար բաղդ, ես պիտի ապրեմ անմեղ մանուկներիս համար:

Այս ասելուց ետ Աղունիկը խելքի կտրած ճամբէն բռնեց ու գնաց:

Պատահեց սար, տուեց ու անցաւ, պատահեց մութ ձոր, էլի տուեց անցաւ. մի խօսքով խուրջինն ուսին թափառեց խոր ձորերում, մութ անտառներում անահ ու անվախ: Շարունակ կանչում էր. «արդարադատ Աստուած, Դու չը կորցնես անմեղ մանուկներիս» և այսպէս ինքն իրան մխիթարելով գնում էր:

Բայց չար բաղդը ձեռը չէր վերցնում նրանից, ամեն տեղ մոլորեցնում էր: Աղունիկի պաշարը վաղուց հատել էր. երկար ժամանակ նա անտառներում թափառելով պտուղներով էր կերակրւում:

Բոլոր ժամանակ Աղունիկի սրտի մխիթարանքը մանուկներն էին. նրանք խուրջինի մի աչքում կանգնած ժպտում էին մօր երեսին և անտառի ու ձորերի միջին տեղերում անմեղ հարցեր տալիս, Աղունիկին մտքի ծովից հանում, երկիւղի ձեռից ազատում: Արդէն սկսել էին թութովել, կլալլտալ մանուկները:

Մի անգամ Աղունիկը մանուկների հետ զրուցով էր ընկել, չէր իմացել, որ անտառի մէջ մոլորուել է: Յանկարծ գնաց, գնաց ու մի գետի հանդիպեց: Դէսուդէն շատ նայեց, կամուրջ չը

կար որ անցնէր, աղամորդի չըկար, որ օգնէր: Յետ դառնալ անկարելի էր, վախենում էր անտառի թանձր տեղը մոլորուած մնալ:

Ի՞նչ անէր, յետևից անտառը խշշում էր, առաջից գետը վշշում, վճռեց Աստուած անունը տալ և գետն անցկենալ: Սիրտ արաւ, մտաւ ջուրը: Գետը մեծ չէր, բայց զԺժոն էր. յատակը մեծ մեծ քարերով լիքը, Աղունիկը մէջտեղը չըհասած, ոտը սկըհաց, խուրջինն ուսից թեքուեց գէպի ջուրը. խեղճը կռները մեկնեց, որ բռնի, ձեռները չօգնեցին: Մինչև վեր կըկենար, գետը մանուկներին խուրջինով սկեց տարաւ: Այդ վայրկեանին Աղունիկի մէջքը, հէնց իմանալ, կտորուեց, ջրի մէջ մնաց երեխանց ետևից լալլալ:

11. Աստուած ի՞նչպէս օգնեց նրան

Կոտրած սրտով դուրս եկաւ գետի ափը, ընկաւ երեսի վրայ, կսկըծաց. մղկըտաց ու հետն էլ սկսեց կռները քարերին, փայտերին խփել, թէ ինչո՞ւ խուրջինը չըբռնեցին, ինչո՞ւ թող արին, որ ջուրը իրա երեխանց տանի: Խեղճը չէր նկատում, որ կռներն արդէն արիւնոտուել են: Աչքերն արտասուքի ծով էին դարձել:

Երկար ժամանակ այսպէս անմխիթար լալլալ էր, ահա երկու ծիւթ թրթռալէ մօտեցան նրան, թևները նրա երեսին բսելով աւշքի բերին: Նրանցից մէկն ասեց.

— Աղունիկ, լաց մի լինի, լսիր իմ բերած աչքալոյսը:

— Ի՞նչ աչքալոյս, ծիտիկ ջան, աչքերը գըղ-գզուած շորի փէշով սրբելով խօսեց Աղունիկը:

— Բաւական էր, ինչքան ցաւեր քաշեցիր: Մանուկներդ համար մի տխրի, նրանք կորած չեն:

— Հապա ի՞նչ են, որ կորած չեն, վրա բե-րեց Աղունիկը սրտակոտոր:

— Նրանք ողջ և անվնաս են: Զուրը տարել է և մի կոճղի մօտ կանգնացրել:

Աղունիկն ուրախացաւ: Միւս ծիտն էլ ասեց.

— Աղունիկ, մենակ այդ չէ, ես էլ պիտի աչքալոյս տամ: Տխուր օրերիդ վերջը հասել է, քիչ էլ համբերիր, ամեն ինչ յետ կըստանաս: Եւ անտուն, անտէր չես թափառիլ: Այս ճամբով դու կըհասնես մի ջրվէժի. նրա կշտից մի կածան է ջրկում գէպի աջ, այդ կածանը կըբռնես ու կը-գնաս: Վերջը կըպատահի մի սիրուն շէնք, նրա մէջ կըբնակուես:

— Ինչո՞վ պիտի ապրեմ, սիրուն ծիտիկ, ո՞վ ապրուստ կըտայ. ոչ պատրաստի փող ունեմ և ոչ աշխատելու կոնքեր:

— Աղունիկ, դու միամիտ կաց, Աստուած կըհասցնի. մինչև շէնքին հասնելն ապրուստի միջոց կըստանաս:

Այս ասելով ծտերը թռան: Աղունիկը ան-համբեր սրտով գետն ի վէր գնաց և ի՞նչ տե-

սաւ: Խուրջինը մի կոճղի դէմ է առել, շուրջ գալիս կողքով խփում է և անվնաս անցնում: Մանուկները հէնց որ իրանց մօրը տեսան. «մայրիկ, մայրիկ» կանչեցին և խուրջինի աչքե-րում ժաժ ու մաժ եկան: Լացական Թղունիկը չըհամբերեց, վազելով շուրջ մտաւ, հասաւ երե-խանց, գրկեց, պաշպընեց ու Տէրին փառք տալով հանեց: Մի կերպ մզեց խուրջինն ու երեխանց շորերը, քիչ ցամաքացրեց ու նորից շալակելով իրա ճամբէն շարունակեց:

Մանուկները բնութեան մէջ մեծանալով սկսել էին օր առաջ ոտնաոտել: Ով գիւղում, քաղաքում տարով կըմեծանար, նրանք բաց եր-կըքի տակ օրով էին մեծանում: Այնքան ժրուել և փարթամացել էին, որ չէին ուզում խուրջին մօտնել և մօրը ծանրութիւն տալ: Իրար հետ կոնաբոնուկ արած Աղունիկի առջևից գնում էին:

Շատ գնացին թէ քիչ, Աստուած գիտէ, վերջապէս հասան ծիտիկներին ասած ջրվէժին: Այստեղ հանգիստ առան: Սիրուն տեղ էր. որ կողմը նայում էր Աղունիկը, այնպէս գեղեցիկ էր, ինչպէս որ երկնային դրախտ: Զրվէժը հօ-տայնքան դուրեկան էր, որ նրան նայելիս Աղու-նիկը բոլոր ցաւերը մոռանում էր:

Սարի լանջերից աղբիւրներն իրար գրկած զլորուելով գալիս էին, բարձրից ուժով ժայռի վրայ ընկնում, ջրի թափից ժայռի մէջ փոս էր դառել: Այդ փոսից շուրջ ծառի նման բարձրա-

897.99
B-17

նում էր ու արևի տակ կանաչ-կարմիր ներկուելով ճոճուում՝ և աղեղաձև թափուում ներքևի աստուածաշէն քարէ աւազանի մէջ:

Երկար ճամբայ գալուց, ծառերի ու քարերի միջով թափառելուց կեդտոտուել ու մաշուել էին Աղունիկի և մանուկների շորերը: Ամօթ էր քաշում այդ անկարգ հագուստով մարդամէջ մտնելը: Ուղեց թէ իրան և թէ որդկերանց շորերը լուանալ, յետոյ ինչքան հնար է, կարկատել պատուտուած տեղերը:

Նզանակը հիանալի էր, մօր պատուէրով երեխաները շորերը հանեցին և գնացին խաղալու: Շորերը կակղելու համար Աղունիկըն ածել էր աւազանի փրփրոուն ջրի մէջ: Քիչ միջոցից ետ կռները մեկնեց, որ շորերը հաղաղի, լուանայ, բայց չըկարողացաւ, մատներ չունէր:

Արտասուքն աչքերը կոխած դարձաւ դէպի երկինք և այսպէս աղաչանք արաւ.

— Ողորմած Աստուած, Դու լաւ գիտես իմ արդար կամ մեղաւոր լինելը, չեմ համարձակուում տրտընջալու իմ գլխին եկած պատիժների համար. պատրաստ եմ աւելի շատին համբերելու: Բայց, անարիչ Աստուած, ի՞նչ կրլինի մեղաւորիս համար անմեղներին չըպատժես: Աղաչում եմ, բաւական համարիր այս մանուկների քաշած զրկանքները, մեղք են, ողորմա սրանց: Երկար ժամանակ է, սրանց ոչ շորերն է լուացուել, ոչ զըլուկները մաքրուել: Գիտեմ, որ անարժան եմ

Քու մեծ ողորմութեանը. բայց քիչը գոնէ մի խնայիլ ինձ այս անմեղ մանուկների համար: Տէր



իմ և Արարիչ, աչքս չեն գալիս ոչ հայրական գանձերը, ոչ ամուսնական փառքը, միայն կռնե-

ըլսող ջացրու, կոներս...

Այս ջերմ աղաչանքից ետ Աղունիկն աչօքերը ներքե գցեց և լիճ տեսաւ. կոները ողջացած, կտրած ձեռները իրանց տեղն եկած: Սրտի ուրախութիւնից վրայ ընկաւ պաշարչեց ողջացած ձեռները, հազար բերան փառք տուեց բարի Աստուծուն: Ուրախութեամբ մօտեցաւ աւագանին, լուսաւ իրա և մանուկների շորերը, արևի տակ փոխուեց ետ քաշուեց մի շուաք, ծառի տերևալալած ճիւղերից պառկելու փափուկ տեղ շինեց, որ քիչ հանգըստանայ ու տխուր մտածմունքներն իրանից հեռացնի: Անցկացած բաները յիշելու վրայ էր, որ բունը նրան իրա ծոցն առաւ:

Մանուկները խաղալու ժամանակ պսպրղան բաներ էին գտել, ուրախացած վազելով եկան մօր կուշտը:

— Մայրիկ, մայրիկ, զիզի ենք գտել, տէս լիճ լաւ է:

Նրանց ճիւղիցից Աղունիկը թարծած եղաւ, բունը փախցնելով մանուկներին ծնկների վրայ նստացրեց, գտած բաները տնդելով տեսաւ, որ փայլուն ոսկիներ են: Ուրախացած սրտով երեսանների ետևից գնաց, լիճ տեսաւ, գետնի մէջ թաղած մի պղինձ՝ ոսկով լիք:

Աղունիկը նորից փառք տուեց Տէրին, որ իրան չի մոռանում, խուրջինը բերեց, բոլոր ոսկիքը ածեց մէջը: Նստեց լուսացած շորերը մի կերպ կարկատեց, մանուկների գլուխները լուսա-

ցաւ ջրվէժի պարզ ջրում ու ծտերի ցոյց տուած կածանով գնաց:

Երեսները խաղալով, խնդալով գնում էին մօր առջևից, Աղունիկը նրանց համար ծառի ճիւղերից նետ ու աղեղ էր շինել:

Մայր ու որդիք գնալով հասան մի սիրուն տան: Տան առաջը պարտէզ, պարտէզի մէջ սօսի ծառ ոսկեղօծ տերևներով: Մօտը մի մեծ աւազան, ուր աղբիւրի ջուրը թափւում էր քլքլալէ երկու ծորակներով: Տան մէջ ամեն բան պատրաստ էր, բայց մէջը բնակուող չըկար: Աւագանի չորսուբոլոր նստարաններ կային, յոգնած ճամբորդները գալիս էին նստում, աւագանի ջրով փոշուց մաքրւում, սօսու թանձր շուաքում էլ հովանում:

Աղունիկը հէնց որ տունը տեսաւ, ասեց.

— Այս յարմար տեղ է, ինչպէս երևում է, անթիւ մարդիկ են անցուղարձ անում այս տան կշտով: Սօսու ոսկեղօծ տերևները շատ ճամբորդների ագահութիւնը աշկարայ կանեն:

Շատ կարելի է, վաղ թէ ուշ այստեղով անցկենան եղբայրս, ամուսինս: Կընստեմ այստեղ և կըսպասեմ: Կոներս առողջացնող ամենաբարի Աստուածը ծտերին առանց նպատակի չէր ուղարկել ինձ մօա: Նրանք ասին, որ տխուր օրերիս վերջն է, նրանք ասին, որ ապրուստ եմ գտնելու, նոյնպէս նրանք ցոյց տուին այս կածանը: Եւ բոլորը ճիշտ կատարուեց: Սրանից ետը

յոյսս Աստծու վրայ կըդնեմ, նա իրա պահած գառը
զայլին չի տալ:

Մտաւ պարտէզ, այնտեղից էլ բարձրացաւ
տունը, տեղաւորուեց իրա մանուկների հետ:
Ապրուստի համար փողն սուս էր. աւագանի
մօտ շատ ճամբորդներ էին հանգստանում, նրանց
միջից ծառայ, աղախին վարձեց ու իրա համար
ապահով բնակուեց այնտեղ անվախ, աներկիւղ:

Աղունիկին այստեղ թողնենք, որ իրա գա-
ւակներով մխիթարուի, մենք գնանք տեսնենք
Զէն թագաւորադի վիճակը:

12. Ո՞վ գնաց Աղունիկին փնտրելու

Զէն թագաւորադը թղթատարի ձեռով նա-
մակն ուղարկելուց ետ երկար չըբաշեց, ինքն էլ
տխուր մտածմունքներով վերկացաւ, եկաւ հայ-
րական աշխարհը: Առաջ պալատում գէսուդէն
աչք ածեց, որ կնկանը տեսնի և ասի. «ախր ին-
չո՞ւ ինձ ամօթով թողիր աշխարհիս մէջ»:

Կնիկը չերևաց: Թագաւորադը գլուխը քաշ արած և ա-
ւելի սրտակոտոր եղած դարձաւ հօրը հարցրեց.

— Հայր իմ, ո՞ւր է կինս, ո՞ւր են նրա ծը-
նունդները:

Հայրը պատասխանեց

— Ի՞նչ ես անում, որդի:

— Ո՞նց թէ ի՞նչ եմ անում, ասեց որդին,
հապա կընկանս համար չըհարցնեմ թէ ո՞ւր է:

— Սխր ինչո՞ւ ես հարցնում, ի՞նչն է ստիպում
քեզ, վշտացած պատասխանեց հայրը:

— Ո՞նց թէ ինչո՞ւ եմ հարցնում, զարմացած
ու վրդովուած խօսեց Զէն թագաւորադը:

— Ի հարկէ հարկաւոր չէ հարցնելը, բանի
որ գրել էիր թէ՛ նամակս իրիկունը կըհասնի
քեզ. իրիկունը սպանի մօրն ու ծնունդներին, ա-
ռաւօտը հասնի, առաւօտը: Շատ էլ գրածդ խել-
քից դուրս բան էր, բայց ակամայ կատարեցի:

— Ի՞նչ ես պատմում, հայր իմ, լացախառն
ճշաց Զէն թագաւորադը. ես երբ եմ գրել քեզ
թէ կնկանս սպանիր: Դու նամակով իմաց էիր
տուել ինձ, որ կինս ազատուեց, այս ու այս բե-
րեց: Հարցնում էիր ինձ՝ թէ ի՞նչ անեմ: Ես էլ
պատասխանեցի նամակով, որ Աստծու տուածի
դէմ դժգոհողը չեմ. ի՞նչ եղել է, Իրան կամքն է,
պահիր դրանց անֆուս, մինչև որ ես տուն հաս-
նեմ:

— Ո՞վ է քեզ այդպէս բան գրել, որդի,
զարհուրած խօսեց Զէն թագաւորը: Ես յիմարու-
ել էի, թէ ձին գլխիս քացի էր տուել, որ այդ-
պիսի բան գրէի: Ընդհակառակը՝ թղթով աչքա-
լոյս էի ուղարկել քնդ, որ կնիկդ ազատուել է և
երկու ոսկեքոշոր տղայ է բերել: Յանկարծ քեզ-
նից պատասխան եմ ստանում, թէ կնկանս ու
որդիերանցս մօրթոտիր: Շատ էլ կամեցայ ու-
շադրութիւն չըդարձնեմ գրածիդ, միայն կինդ,
հաւատարիմ կինդ թուղթը կարդալով առաջ դեռ

տխրեց, յետոյ մի անգամ ինքն ինքն ցոյց տուեց, որ ինձ զարմացրեց: Նա էր ինձ ստիպում, որ շուտ կատարում տամ գրածիդ: Եւ այդ անում էր, որ ցոյց տայ, թէ որչափ է սիրում քեզ և մինչև ինչ տեղը կարող է խոնարհիլ քո պատճառով:—Ա՛խ, իմ անմահ Աղունիկ, որքան պարկեշտ էիր, վշտահար կերպով կուրծքը ծեծեց Զէն Թագաւորը. քո նման ո՛ւր գտնեմ, ինչո՞ւ չար բաղդը քեզ խեց ձեռիցս: Արեւի պէս լուսաւորում էիր խաւարած ծերիս, ինձ մխիթարելու և վերջին օրերս քաղցրացնելու համար էր ուղարկել քեզ Աստուած, ինչո՞ւ շուտ ետ խեց իրա ողորմութիւնը...

—Վերջն ի՞նչ արիր, հայր իմ, անհամբեր սրտով հարցրեց որդին:

—Ի՞նչ պիտի անէի, գրածդ կատարելու համար իմ ձեռով իմ աչքը հանեցի:

—Ի՞նչ ես ասում, հայր իմ, լաց եղաւ որդին, հապա Աղունիկը արածիդ հակառակ չէ՞ր:

—Ընդհակառակը, իրա անձի մեծ թշնամին նա էր. քանի անգամ մանուկները գրկած բերել է առաջս, խնդրել, աղաչել, որ նամակիդ մէջ գրածը կատարեմ:

—Յետոյ ի՞նչ արիր, կատարեցիր...

—Սպասիր, որդի. ասեմ: Մի բանի օր բերանս առանց մանանոյ դնելու շարունակ լաց էի լինում. Փախչում էի, որ Աղունիկին չըպատահեմ, վերջին օրերը այլևս արտասուք չէր ե-

րևում նրա աչքերին, տեսնում էի, որ մտքում վճռել է քո սիրու մեռնել: Ամեն անգամ վճիռդ մտաբերելով՝ երբ Աղունիկին ու մանուկներին տեսնում էի, սիրտս լըլըքում էր, ձեռներս դող-դողում...

—Վերջապէս ի՞նչ արիր, կարճ ասա. անողորմ գտնուեցիր, դառնացած հարցրեց որդին:

—Այո, որդի, այնքան անողորմ գտնուեցի, որ մեռցրի խիղճս քո պատճառով, թէպէտ գրածդ ճշտութեամբ չըկատարեցի, բայց ստիպեցի կնոջդ, որ մանուկներն առնի ու պալատից հեռանայ:

—Ա՛հ, հայր իմ, թեթևացած սրտով դռնէջ թագաւորազը և փաթաթուեց հօր վզովը, որքան շնորհակալ եմ, որ գութ ես ունեցել անմեղ մանուկներին վրայ: Տո՛ւր ինձ ձեռդ համբուրեմ: Օրհնիր ճամբէս, ես գնում եմ այնտեղ, ուր գնացել է Աղունիկը իրա մանուկներով: Եթէ կենդանի գտայ նրանց, կըբերեմ ու ես էլ կըդառնամ, եթէ չէ, ֆնսս բալով յաւիտեան:

Թագաւորական շորերը թողած որսկանի շոր հագաւ, նետ ու աղեղը ճիտը գցեց, Աստուած անունը տալով կորած Աղունիկի ետնից գնաց: Նրա աչքը չէին գալիս ո՛չ շողը, ո՛չ անձրիւր և ո՛չ ճամբի դժուարութիւնը: Պարկն ուսին որս անելով և ճամբայ կտրելով հասաւ մի վիրու-վիրու անտառ, տեսաւ այնտեղ մի մարդ:

—Այ եղբայր, ով ես, ի՞նչ մարդ ես, հարցրեց Ջէն թագաւորազը:

—Որսկան եմ, պատասխանեց նա:

—Բա ես էլ որսկան եմ: Արի՛նստիր կողքիս, քեզ իմ սրտի ցաւը պատմեմ, թէ իմ վիճակը քո սիրտը շարժեց, ընկերացիր ինձ, գնանք միասին:

—Լաւ, պատմիր, անծանօթ եղբայր, տեսեմ ի՞նչ է քո վիշտը:

Ջէն թագաւորազը գտակը գետնին դրեց ու մանրամասն պատմեց իրա գլխի անցուանքը: Միւս որսկանը գլուխը քաշ լսում էր ու երբեմն կարմրատակում էր, երբեմն գոյնը թրուցնում:

Սա Շէն թագաւորազն էր:

Աղունիկին կոնատելուց ետ երկար չէր անցել, իրա արածի վրայ զղջացել էր: Շատ էր մեղադրել իրան, մխիթարութիւն չէր գտել: Խղճի ձեռից տանջուելով ոչ գիշերն է հանգիստ ունեցել, ոչ ցերեկը: Շուտ-շուտ թագուհի մայրը երևացել է երագում և նրա վրայ զայրացել: Կինը դաւակից կտրուել էր և գէշ-գէշ արարմունքներով անտանելի դառել Շէն թագաւորազի աչքում: Սա աւելի լաւ էր համարում սև օձ տեսնել, քան թէ իրա կնկանը: Նրանից բաժանուելն անկարելի էր, միակ մխիթարութիւնը գտնում էր որսորդութեան մէջ:

Կնկայ երեսը ուշ տեսնելու համար շաբաթներով որսը պատճառ արած անտառ ու ձոր չափչփում էր: Հիմի էլ կնկայ ձեռից էր փախել

անտառ, որ անսպասելի կերպով պատահեց Ջէն թագաւորազին: Իմացաւ, որ իրա կոնատուած բոյրը ոչ միայն կենդանի է մնացել, այլ և թագաւորի հարս է դառել, երկու որդի ունեցել: Դրա վրայ շատ ուրախացաւ, որովհետեւ իրա արածի վրայ վաղուց փոշմանել էր: Բայց երբ վերջը լսեց թէ նորից դժբաղդութիւն է եկել քրոջ գլխին, սրտում շատ ցաւեց ու առանց իրա սովի-նելը յայտնի անելու դարձաւ Ջէն թագաւորազին ասեց.

—Թագաւորազ տէր, ցաւը մարգիկ պիտի բաշեն, և ոչ սարերը: Քաջ կաց: Դու թագաւորի ցեղ ես, քեզ աստիճանով հաւասարուել չեմ կարող, բայց իբրեւ որսկան ընկերդ կըլինեմ: Թագաւորազին միշտ մի ծառայ հարկաւոր է, ընդունիր ինձ ծառայի տեղ: Քո վիշտը սիրտս տակն ու վրայ է արել: Գնանք, ուր որ կուգես, թէկուզ մինչև աշխարհի տուտը:

—Շնորհակալ եր, որսկան եղբայր, որ ընկերանում ես, հիմի կարծում եմ թէ ցաւս կիսուեց, որովհետեւ սիրտս թեթևացաւ:

Իրար ձեռ տուին ու ճամբայ ընկան:

Շատ բաղաք, շատ գեղ անցկացան, ամեն տեղ էլ հարցրին.

—Այս կողմերը կոնատ կնիկ չէ՞ք տեսել, հետն էլ երկու մանուկ:

Ամեն տեղ էլ պատասխանում էին:

—Ձէ, չենք տեսել:

13. Զէն թագաւորազին անտառում՝ ո՞վ պատահեց.

Վերջապէս անտառով անցնելիս մի փայտահատ տեսան, սրան էլ հարցրին: Սա պատասխանեց:

— Գիտեմ որ որսկանները փայտահատից շրնորհակալ չեն աշխարհի այն գլխից մինչև այսօր, որովհետև կացնի թխկոցից կեստարն ու բախրան գլուխ են առնում, փախչում: Բայց ինչպէս երևում է, դուք ինձանից անգոհ չըպիտի գնաք: Այստեղից բաւական հեռու մի տան երկու ոսկեքոշոր երեխաներ են կենում իրանց մօր հետ: Այնտեղ ոսկետերև սօսի կայ, մօտն էլ աւազան, բայց չըգիտեմ կնիկը կոնստ է թէ կոնաւոր:

— Շատ շնորհակալ եմք, փայտահատ եղբայր, որ այդքան տեղեկութիւն էլ տուիր. ահա քեզ մի կից ոսկի, ասեց Զէն թագաւորազը և փայտահատի ցոյց տուած ուղղութիւնով գնաց ընկերի հետ:

Երկուսն էլ գնում էին, բայց մէկի սիրտը ուրախութիւնից էր տրըփ-տրըփում, միւսինը վախից ու ամօթից:

Երբ հասան մի գեղեցկաշէն տան ու առջևի աւազանն ու մեծ ծառը տեսան, Զէն թագաւորազն ասեց.

— Յարմար շուաք է, այստեղ սրի քիչ հանգստանանք: Եթէ մեր կորուստը այս տանը կըլի-

նի, լաւ, եթէ չէ, ճամբաներս կըշարունակենք:

Բաշուեցին սօսու թանձր շուաքը, պարկերը ունեւրից վէր բերին, որսերը հանեցին, որը մաշկեցին, որը փետրեցին: Յետոյ երբ նրանք չտես մարդու պէս զարմացած սօսու շողշողուն տերևներին էին նայում, տեսան որ երկու գլխաբաց երեխայ նետեր արձակելով խաղալով մօտենում են իրանց: Զէն թագաւորազի սիրտը ծլուկ եղաւ, ասեաթէ եկաւ բերանին կպաւ նրանց ոսկէ մազերը տեսնելիս:

Շէն թագաւորազը կրակն արել էր, հէնց որ երեխանց տեսաւ, ուղարկեց, որ գնան աղբերեն իրանց տանից:

Շէն թագաւորազը, համ երեխանց ուղարկեց, համ ետևներից նայեց: Երեխանց մայրն էլ համ աղն ուղարկեց, համ էլ եկաւ ճամբորդներին ծածուկ տընդեց և տեսաւ, որ որսկանի պատառոտուն շորերի մէջ մինն իրա եղբայրն է, միւսն իրա ամուսինը:

— Տէր Աստուած, փառքդ շատ, մտքումը կրկնեց մի քանի անգամ ու յետոյ աւելացրեց. — ասենք թէ ստիպել ես, որ նրանք գան իրանց արածը մեղայ գան, բայց ի՞նչ զարմանալի դիպուածով երկու մեղաւորներին իրար ես հանդիպեցրել:

Որսկաններն այդ բանից անտեղեակ, ներքև աւազանի մօտ խորոված արին և ամենահամեղ կտորներից մանուկներին առատ բաժին տուին:

Մանուկները շուտով ընտելացան նրանց. ժիր, կայտառ պատիկներ էին, ամեն մի հարց ու պատասխանի վրայ անմեղութեամբ «քեռի» կամ «հայրիկ» էին կանչում և որսկանների սրտները ծլուկեղ անում:

Այս բոլորը Աղունիկը թագուն տեղից տեսնում ու լսում էր: Տանջուած սիրտը լցուել, արտասուքն առուի պէս եկել աչքերը ողողել էր:

Մէկ ուղում էր երեխանց պատճառով իջնիներքև և ծանօթութիւն տայ ճամբորդներին, մէկ էլ վճիռը քանդում էր, որ տեսնի թէ վերջն ինչ է լինելու, արդեօք նրանք ճանաչում են, թէ չէ: Աղունիկը երեխաներին կանչելու համար մօտեցել էր պատշգամբին: Որսկանների աչքովն ընկաւ մի աննման, սիրուն հարս, երկուսին էլ դուր եկաւ:

Ձէն թագաւորազը առանց աչքը նրանից հեռացնելու ընկերին թևով բրթեց կամաց ու ասեց.

— Այս հարսն ինչքան նման է իմ կնկանը, ասես թէ մի խնձոր կէս արած: Իսկ և իսկ նա է, ընկեր ջան, մանաւանդ որ զաւակներն էլ ոսկեքոչոր են: Բայց սիրտս կոտրուում է նրա նով, որ կռները ողջ են:

Շէն թագաւորազը իսկոյն պատասխան չըտուեց, նա այդ բոպէին մտքի ծովում չարչարւում էր ու չէր կարողանում իմանալ, թէ ով է այդ հարսը, որ իրա քրոջ նման է: «Թէ իմ քոյրն է, բա ինչո՞ւ ձեռներ ունի, չէ՞ որ քրոջս ձեռները

ես ինքս եմ կտրել»: Վախենալով որ ինքը ծանգով ընկած լինի, մնաց լուռ, հարսի վրայ նայելիս:

Երկու որսկաններն էլ իրանց մէջ ջոկջոկ համոզուեցին, որ սխալուել են. ոչ մէկի կինն է և ոչ միւսի քոյրը: Մինչև անգամ ամօթ քաշեցին հարսին մօտենալ, հարցնել, թէ դու ով ես կամ ի՞նչ կինարմատ ես, որ մեն մենակ այստեղ բնակում ես:

Վերջապէս Շէն թագաւորազը տխուր կերպով տեղից վերկացաւ, ասեց.

— Թագաւորազ տէր, յոյսներս զուր էր: Երկար մնալուց օգուտ չըկայ, վեր կաց ճամբսներս շարունակենք, տեսնենք ո՞ւր ենք գտնում մեր կորուստը:

Ձէն թագաւորազը ոչինչ չէր լսում ընկերի ասածից, նրա ուշքն ու միտքը ոսկեքոչոր մանուկների վրայ էր, նրանց պատճառով չէր ուղում սօսու տակից հեռանալ: Մանուկները նապաստակի տոտիկներն ու գլուխները վերցրած խաղում էին:

— Հայրիկ, մօտեցաւ երեխաներից մէկը Ձէն թագաւորազին, միւս անգամ որ գաս, ինձ համար փոքրիկ նապաստակ կըբերե՞ս:

Միւսն էլ Շէն թագաւորազի առաջը վաղելով ասեց.

— Քեռի ջան, դու էլ որ գաս, ինձ համար նաշխուն ծիտիկ կըբերե՞ս:

—կըբերենք, բալիկներ, կըբերինք, ձեռները նրանց գլխներին քսելով պատասխանեցին որսկաններն ու սրտակոտոր ճամբայ ընկան.

Այդ տան մօտից մի քիչ հեռանալուց ետ երկուսը միասին հառաչեցին.

—Ա՛խ, ինչ կըլինէր որ այդ հարսը կոնատ լինէր ու մեզ զուր տեղը սար, ձոր չըգցէր:

Ձէն թագաւորազն աւելացրեց համարեա լալով.

—Ի՛նչքան նման էր իմ կնկանը, ուր էր թէ ձեռները չըլինէին:

Միւս ընկերն էլ ասեց.

—Եթէ Շէն թագաւորազը այստեղ լինէր ու այդ հարսին տեսնէր, նոյնպէս չէր հաւատալ, որ դա իրա քոյրն է, որովհետեւ ձեռները նա ինքն է կտրել: Վշտանալ մի, ընկեր, Աստուած ողորմած է, վաղ թէ ուշ կըպատահեցնի, ում որ փնտրում ենք:

Այսպէս խօսելով որսկանները ճամբէն շարունակեցին տխուր, գլուխները կախ:

14. Շէն ու Ձէն թագաւորազները ինչո՞ւ Աղունիկին չէին ծանաչում.

Իսկ ջրատար Աղունիկը այնպէս էր յուզուել ու լցուել, որ լաց լինելու համար մի մազ էր մոռում: Որսկանները գնալիս Աղունիկը աչքերով նրանց հետևում էր ու բիչ էր մոռում սիրտը

հալ գնայ: Մէկ ուզում էր ետևներից ծվայ, կանգնեցնի, թէ ախր ուր էք գնում, քաղասիրտներ, ինչո՞ւ էք ինձ այս լամայի տեղը մենակ թողում,



չէ՞ որ մէկիդ քոյրն եմ, միւսիդ ամուսինը: Բայց ներսից մի ձայն նրան ասեց. «Աղունիկ, դեռ բերանիդ հուպ տուր, շատը համբերել ես, բիչն էլ համբերիր»:

Ուղիղ է, այդ ձայնին լսեց Աղունիկը, չըծը-
վաց, բայց սրտին ընդդիմանալ անկարող եղաւ,
հէնց երեխաները մօտն եկան թէ չէ, պատուի-
րեց, որ վաղ տան, ճամբորդներին յետ կանչեն։
Մանուկներն իսկոյն ծլկեցին ու ետևներէց
ձվձվացին։

— Քեռի, հայրիկ, կանգնեցէք, բան ենք ա-
սում։

Որսկանները կանգ առան։ Մանուկները հե-
ւալով, թանջին տալով մօտեցան և փեշներէց
բռնեցին։

— Քեռի, մայրիկս քեզ կանչում է, ասեց
մինը։

— Հայրիկ, մայրիկս քեզ էլ է կանչում, վրայ
բերեց միւսը։

Թագաւորազները զարմացան, անգ-մանգ ե-
ղան, թէ հարսն ինչու պիտի իրանց կանչի։ Ի՞նչ-
քան էլ նախշուն երեխաներին հարցեր տուին,
պատճառը չիմացան, դրա համար հետևեցին ն-
րանց ու հասան աւագանի մօտ։ Գեղեցիկ հարսը,
որ վերևը կանգնած էր, այսպէս խօսեց։

— Դուք անմխաս մարդիկ էք երևում, օրը
մթնելու վրայ է, այսպէս ուշ ուր էք գնում, գը-
նալներդ դուր է, գիշերը դաշտում կը մնաք, ե-
ղանակը շատ էլ լաւ չէ։ Որովհետև երեխաներիս
դուր էք եկել, ես առաջարկում եմ հիւր մնաք
այստեղ, օթևանելու տեղ ունենք։ Առաւօտն Աս-
տուած կը կանչէք և ձեր ճամբէն կը շարունակէք։

Ի՞նչ էք ասում, յօժար էք թէ չէ։

— Բարի խորհրդին ո՞վ չի յօժար լինիլ։ Աս-
տուած որդիքդ պահի, շատ շնորհակալ էլ կըլի-
նենք, պատասխանեցին որսկանները և գնացին ի-
րանց համար պատրաստած օթևանում հանգստա-
նալու։

Իրիկունը որ հասաւ, Աղունիկը նրանց հա-
մար լաւ սեղան պատրաստեց, լաւ հարկեց,
պատուեց և փափուկ անկողիններում քնացնել
տուեց։ Ինքը նրանց երեսը չէր գնում, ծառա-
ներն էին սպասաւորում։

Մինչև ուշ գիշեր երեխաները հիւրերի մօտից
մօր կուշտը չեկան, նրանց ծնկների վրայ նստած
քաղցր, անուշ խօսում, ծիծաղելու պատճառ էին
տալիս։ Քնելհանգումին Աղունիկը երեխաներին
կանչեց ու փաղաքշելով հարցրեց։

— Նախշուն բալիկներս, ի՞նչ ասիք, երբ հիւ-
րերին կանչելու գնացիք։

— Մայրիկ ջան, ես «քեռի» կանչեցի։ Երբ
կանգնեց, հասայ ու փեշից բռնեցի։

— Ես էլ, մայրիկ ջան, «հայրիկ» կանչեցի,
վրայ բերեց միւսը, հօ վատ չեմ արել։

— Շատ լաւ ես արել, որդի։ Հապա՛, քո
հայրիկն էլ դրա պէս մարդ է, շուտով պիտի գայ
և քեզ իրա ծնկների վրայ նստացնի։

Համբուրեց Աղունիկը երեխաներին և ասեց։

— Լսեցէք, ինչ եմ ասում երկուսիդ էլ։
Հիւրերը քնած են, գնացէք ինձ մօտ բերէք այն

հիւրի պարկը, որին «քեռի» էք ասում: Եթէ ասածս անսխալ կատարէք, էգուց ձեզ մի-մի նախշուն ծիտ կըտամ,

Երեխաները զգոյշ գնացին և բերին պարկը:

Աղունիկը նրա մէջ երկու ընտիր խնձոր դրեց և տաս հատ ոսկէզօծ տերև: Բերա՛ր ամուր կապելով երեխաներին ասեց.

—Քեռու համար ճամբի պաշար դրի, տա-րէք էլի այնտեղ, որտեղից վերցրել էիք:

Երեխաները տարան: Այս բոլորից Շէն թա-գաւորազը ոչինչ չիմացաւ, որովհետև անուշ քնի մէջ փշշացնում էր:

15. Աղունիկն ի՞նչպէս ամաչեցրեց անիրաւ եղբորը

Լոյս ու մութը դեռ չըբացուած որսկանները զարթնեցին. կարծելով թէ չքնաղ հարսը դեռ քնած կըլինի, չուզեցին անհանգստացնել, ծառային շնորհակալութիւն յայտնեցին, թողին օթեանը և պարկերն ուսներին շարունակեցին իրանց ճամբէն:

Բաւական գնալուց ետ Շէն թագաւորազը կանգ առաւ և ընկերին դիմելով ասեց.

—Ո՛րքան սիրուն, ու խելօք մանուկներ էին: Նրանցից մէկը քեզ «հայրիկ» էր կանչում, եթէքս կինը այդքան գեղեցիկ լինէր, դու աշխարհիս ամենաերջանիկ ամուսինը կըհամարուէիր:

—Այդ ուղիղ ես ասում, ընկեր, վրայ բերեց Ձէն թագաւորազը, բայց չէ որ մանուկներից մինն էլ քեզ «քեռի» էր անուանում: Եթէ այդ հարսի պէս քոյր ունենայիր, մանուկների պէս էք քեռորդիք, ո՛վ ասես, որ քեզ չընախանձէր:

Այսպէս խօսելով որսկանները փոքրիկ առուն նոր էին անցնում, որ դէպի անտառը կեռման տան, նկատեցին որ գեղեցիկ հարսի ծառան մի մահակ ձեռին ետևներից վազում է և ձայն տալիս.

—Վացէք, միք գնալ, մեր տիրուհին ձեզ կանչում է:

—Ի՞նչ է ուզում, պատասխանեցին որսկանները, կարելի է նախաճաշ տալու համար է: Յետ դառ, ասան, շատ շնորհակալ ենք, ետ դառնալ չենք կարող, ճամբաներս շատ հեռու է, պիտի գնանք:

—Ո՛չ, ո՛չ, շատ հարկաւոր խօսք է ասելու, անպատճառ պիտի յետ դառնաք, թէ չէ ուժով կըտանեմ ձեզ, այսպէս է հրամանը:

Վերջին խօսքը որսկանների վրայ վատ ազդեց:

—Ի՞նչ է նշանակում՝ ուժով կըտանեմ: Տեսան որ ծառայի հետ գլուխ գնելով անհամութիւն պիտի ծագի, յօժարուեցին ետ դառնալ, որ իմանան թէ ի՞նչ է պահանջում իրանցից հիւրասէր, սիրուն հարսը: Գնացին ու շատ բարկացած գտան նրան, որը թթու դէմք առած այսպէս խօսեց նրանց հետ.

—Երէկ ձեզ լաւութիւն արի, իբրև յոգնած

ճամբորդներէ հրաւիրեցի տունս եւ արժանաւոր կերպով պատուեցի, այնպէս չէ:

—Այո, այդպէս է, պատասխանեցին որսկանները:

Հարսը շարունակեց.

—Բաւական չի, որ այս առաւօտ հեռանալիս խնայեցիք դատարկ բերան շնորհակալութիւն անել, այլև վատ շնորհներդ ցոյց էք տուել, ծածուկ մտել էք պարտէզ և գողութիւն արել: Միթէ այդպէս են վճարում ձեր աշխարհում աղ ու հացի փոխարէնը:

Որսկանները, որ չէին սպասում երբէք այդ նախատինքին, մնացին ապշած. յետոյ ուշքի գալով աշխատեցին սրգարանալ, որ իրանք ազնիւ մարդիկ են, Աստուած, երկինք, այդպիսի բան չէին կարող անել:

—Ի՞նչով էք ազնիւ մարդիք, երբ ազահի պէս սօսու տերևներից էլ էք գողացել, պարտէզի ընտիր խնձորներից էլ: Ա՛յ ձեզ նմուշները, թէ որոնցից էք գողացել ու պոկել: Ամօթ ձեզ:

Որսկանները տեսնելով, որ հարսն իրանց հաստատ գող է բռնում: միասին բողոքեցին նրա դէմ.

—Զուր ես այդ տեսակ բան կարծում, մենք ոչ գիշեր ժամանակ օթևանից դուրս ենք եկել և ոչ խնձորի ու ոսկետերևների երես տեսել:

—Ոչ մի բանի երես չէք տեսել հա՛, գոչեց

հարսը բարկացած ու հերսոտ աչքերով կանչեց ծառաներին.

—Շուտ եկէք այստեղ սւ փնտրեցէք այս րոպէիս սրանց պարկերը:

Ծառաները շտապով վրայ ընկան տիրուհու հրամանը կատարելու:

—Մենք ընդդէմ չենք, միամտաբար խօսեցին որսկանները, թող փնտռեն ոչ թէ պարկերը, այլև մեր գրպանները: Եթէ մեզ մօտ մազի չափ գողութեան հետք գտնուի, դատաստանի մատնիր: Թող մեղաւորը մահով պատժուի: Կրկնում ենք, որ մենք ազնիւ մարդիկ ենք, զո՛ւր ես մեղադրում:

—Լաւ, հիմի կերևայ, թէ որքան ազնիւ մարդիկ էք, ծաղրելով խօսեց Աղունիկն ու դեռ այս խօսքումն էր, որ ծառան բռու պարկից խընձորն ու տերևները հանեց:

Շէն թագաւորազը երբ աչքով տեսաւ, որ իրա տոպրակից դուրս եկան գողացած բաները, մնաց ամօթից դմբբաժ. Զէր իմանում, թէ ինչպէս արդարանայ, մի րոպէում հարիւր անգամ գոյն առաւ, գոյն տուաւ: Եթէ գետինը պատռուէր, ուրախութիւնով ներս կընկնէր, միայն թէ հարսի երեսին մտիկ անելուց ազատուէր: Մի քանի րոպէ լուռ մնալուց յետոյ Շէն թագաւորազը տեսաւ, որ շփոթութիւնն իրան պատում է, ուրանալու էլ դուռը չունի, վիզը ծռած չոքեց հարսի առաջ և աղաչելով ասեց.

—Հաւատա Աստծուն, ես այդ գողութեան տեղեակ չեմ, ես մեղ չունեմ:

—Եթէ դու մեղ չունես գողութեան մէջ, հապա ո՞վ է դրել խնձորն ու տերեւները քո պարկի մէջ:

—Չգիտեմ, Աստուած է վկայ:

—Կարելի է, ընկերդ է դրել, ասեց հարսը:

—Չէ, ընկերիցս այդ բանը հաւատարի չէ: Եթէ դնէր, իրա տոպրակում կը դնէր:

—Ուրեմն գողը դու ես, որովհետեւ քո տոպրակից հանեցին խնձորն ու տերեւները:

—Ողորմած հարս, ես չեմ ուրանում իմ տոպրակից հանելը, բայց հաւատա Աստծուն, որ ես տեղեակ չեմ, չեմ գիտում, թէ ո՞վ է դրել: Աստուած չի վերցնիլ, որ գուր տեղ ինձ մեղադրում ես:

Աղունիկն, այդ ժամանակ շեշտակի նայելով եղբօր աչքերի մէջ, բարձրաձայն ասեց.

—Դու որ չըգիտես, թէ ո՞վ է պարկիդ մէջ գողունի խնձոր ու տերեւ դրել, Աստծուն վկայ ես կանչում, որպէսզի հաւատացնես, հապա Շէն թագաւորի ազնիւը գիտէր, թէ դանակն ո՞վ է դրել իրա գրպանում, որ դու անգութի նման չըլսեցիր նրա երդումին, լացին ու աղաչանքին և դուր տեղը ձեռները կարեցիր:

Չէն թագաւորազը այս լսելով մատը կծեց ու զարմանքից մնաց իրա ընկերի երեսնիվեր նայելիս: Շէն թագաւորազի թուքը կպաւ, երբ

ճանաչեց, որ առջև կանգնածն իրա քոյրն է: Հիմի Չէն թագաւորազի երեսին նայելն էլ ամաչում էր: Ամօթից համարեա կիսամեռ եղած ընկաւ Աղունիկի ոտները և պաղատեց.

—Ների՛ր, քոյր իմ, անողորմ եղբօրդ: Աստըծու արդարութեանը մատաղ լինեմ, իմ անգութ վարմունքն անպատիժ չըթողեց, շատ վաղուց է սրտիցս հանգիստն է խլել, դէմքիցս ծիծաղը: Քեդ անիրաւաբար պատժելու օրից մի րոպէ դադար չունեմ:

Չէն թագաւորազը մէկ իրա ընկերի երեսին էր նայում, մէկ հարսի և ինքն իրան խօսում:

—Այ ընկեր, միթէ դու Շէն թագաւորազն ես, որ սրա ձեռները կտրած լինես: Եթէ կտրել ես, հապա ինչո՞ւ ողջ եմ: Տէր Աստուած, ո՞վ է այս կինարմատը. եթէ իմ կնիկն է, նա ձեռներ չունէր, այս ձեռները օրտեղից բսան:

Եղբայրը լալիս էր և Աղունիկի ոտքերը համբուրում: Քոյրը խղճալով ասեց.

—Վեր կաց, եղբայր, քեզանից վրէժ առնելու միտք չունեմ: Այն էլ բաւական է, որ դու զղջացել ես արածիդ վրայ և զգացել, որ ես անմեղ եմ: Ներում եմ բոլոր սրտովս: Խղճի խայթիցճակատդ խորշոմներով է ծածկուել, գլուխդ ու դէմքդ ճերմակ մազերով: Ինձ պատուհասել տուող կինդ երևում է, որ քեզ մխիթարելու տեղ վաղաժամ ծերացրել է:

Չէն թագաւորազը արդէն հաւատալով որ

897.99
B-17

առջև կանգնածը իսկական իրա կնիկն է, սիրտ արաւ հարցրեց.

— Հապա ինձ չե՞ս ներում: Թէ որ սա քեզ կոնատող եղբայրդ է, ախր ես էլ նրա քամբախ- սացրած քրոջը թագաւորի հարս դարձնող երի տասարդն եմ:

— Դու արժանի չես ոչ մի ներողութեան, վշտացած վրայ բերեց Աղունիկը, քս կինն իրա խոստման համաձայն ոսկեքոչոր տղաներ բերեց, սպասում էր ուրախ շնորհաւորէքի, բայց յան- կարծ թուղթ ես ուղարկում, թէ սպանեցէք մօրն ու նորածիններին:

— Ընդհակառակը, կարմրելով խօսեց Ձէն թագաւորազը, հօրիցս մի թուղթ էի ստացել, որի մէջ գրած էր. «կինդ ազատուեց և երկու լա- կոտ բերեց, ինչ անեմ»: Ես էլ պատասխանեցի հօրս թէ.

— Աստծու տուածի դէմ դժգոհալու ոչինչ չու- նեմ, պահիր մինչև իմ գալը:

— Ուղի՞դ, հարցրեց Աղունիկը:

— Աստուած, հոգ, շնոր, ուղիդ եմ ասում, պատասխանեց Ձէն թագաւորազը:

Այս որ լսեց Աղունիկը, մնաց գլուխը կախ, մտածմունքի մէջ ընկած: Լռութիւնը ընդհատեց Շէն թագաւորազը.

— Ինչպէս երևում է, մի չար մատը կայ, որ փոխել է թղթերը: Միամիտ կացէք, որդուս սպանողին լոյս հանող Աստուածը ձեր թղթերը

փոխողին ծածկուած չի թողնիլ: Գնանք թղթա- տարին հարց փորձ անենք, իսկոյն կիմանանք:

— Հիմի ներսում ես, վախենալով մօտեցաւ Ձէն թագաւորազը:

— Ներում եմ, քաղցր ժպտալով պատասխա- նեց Աղունիկը:

— Ձէ, մինչև չասես, թէ ինչպէս են ողջա- ցել կոներդ, ես չեմ հաւատալ, որ ինձ ներում ես, պնդեց Ձէն թագաւորազը:

— Երբ որ այդպէս է, մինչև ես էլ չիմանամ՝ թէ ո՞վ է նամակներ փոխողը, չեմ պատմիլ կըռ- ներիս ողջանալը, պատասխանեց Աղունիկը և նը- րանց հետ կոնաբռնուկ արած գնաց ճաշի:

16. Ի՞նչ պատուհաս քաջեց չար հարսը

Հետեւեալ օրը ճամբի պատրաստութիւն տե- սան, ամեն ինչ բարձեցին ջորիների վերայ ու վերադարձան Ձէն թագաւորի պալատը:

Ծերունի թագաւորը կասեցաւ մեռած տե- ղից յարութիւն առաւ, երբ հարսին ու թոռներին ողջ և առողջ իրա առջև տեսաւ: Աստծուն ան- վերջ փառք էր տալիս, անդադար համբուրում մէկ թոռների թուշերը, մէկ հարսի ողջացած ձեռները:

— Թղթատար, արի այստեղ, կանչեց Ձէն թագաւորազը, ճշմարիտն ասա, ինձ մօտ գալիս ո՞վ է քեզ հանդիպել:

897.99
B-17

— Ոչով չի հանդիպել, տէր իմ:

— Ճամբին համ հետ ես զրոյց արել, ուղիղն ասա:

— Ճամբին շատ տեղ եմ հանգստացել, բայց զրոյց արել եմ միայն Շէն թագաւորի հարսի հետ, երբ ուժով հրաւիրեց ինձ իրա պալատը:

— Ա՛խ, էլի նա, այն նզովեմը, դառնացած բացականչեց Շէն թագաւորազը, անպատճառ նա է փոխել:

— Ո՛վ, ո՛վ, սրտատրոփ հարցրեց Զէն թագաւորազը:

— Ուրիշ ո՛վ պիտի լինի, իմ նախանձ կինը, տխուր պատասխանեց Շէն թագաւորազը և դարձաւ դէպի Աղունիկը:

— Քոյր իմ, հիմի ամեն բան պարզ է: Մեր ամբողջ ընտանիքի քամբախտութեան պատճառն է կինս: Ողորմած Աստուածը բեզ պաշտպանել է նրա նենգութիւնների դէմ, հազար փութը նրան, կեանքս ու հոգիս վաղուց են թունաւորուած կնկանս ձեռով: Ես շատ չեմ հեռու գերեզմանից, կենդան մնալուս միակ կարօտն ու փափագը քեզ տեսնելս էր: Սրարչին փառք, դրան էլ արժանացրեց: Այսուհետեւ ապրելը, կեանք քաշելը քեզ է արժան, աննման քոյր, շատ ապրես բախտաւոր կեանքով և Շէն թագաւորի ծուխը ծխես քո ոսկէքոշոր զաւակներով: Ամուսնուդ աշխարհը քաջասիրտ մարդկանցով է լիք, հօրդ աշխարհն էլ ամեն տեսակ բարիքներով ու գանձերով, ապրեցէք ու վայելեցէք:

Այս ասելով մօտեցաւ, Զէն թագաւորի ձեռք համբուրեց, դարձաւ փեսայի ու Աղունիկի հետ



համբուրուեց, յետոյ նախշուն քեռորդիներին մէկ մէկ գրկեց, արտասուալից աչքերով պաշպչեց ու ճամբայ ընկաւ դէպի իրա աշխարհը:

Հասաւ թէ չէ, իսկոյն ծառաներին հրամայեց, որ նախանձոտ կնկանը դուրս բերեն պալատից ու ոտն ու ձեռք կապկապեն:

Հրամանը կատարուեց: Սաթայէլ հարսը մահը սիրտն առած, մազերը փետոււմ էր ու գլուխը վէր ծեծում: Յետոյ Շէն թագաւորազը բերել տուեց իրա ձիաներից ամենակրակոտը, որ չար կնկանը նրա ագուց կապի: Մի քարքարուտ դաշտ տարաւ, իրա ձեռով կապեց, ձիու սանձը բաց թողած, պատուէր տուեց ծառաներին, որ ձիուն շարունակ հալածեն, այնքան վազվզեցնեն քարերի միջով, որ կնկայ մարմնի մեծ կտորը աւանջը մնայ:

Այդպէս էլ եղաւ:

Ձին հուշտ եղած սկսեց փախս առնել ու չար հարսի մարմինը մէկ այս քարի ճակատով խփել, մէկ այն: Կրակոտ անասունը հէնց որ դգում էր, թէ մի բան իրա կռաջիկներին դիպչում է, աւելի ևս կատաղում էր ու քամի առածի պէս առանց քար ու ծառ հարցնելու մէկ դէս թռչում, մէկ դէն: Կատաղութեան փրփուրը բերանին այնքան վազվզեց քարերի միջով, մինչև որ ագուցից կապած ծանրութիւնը պատառ պատառ պոկուելով, ցաք ու ցրիւ եղաւ դաշտի մէջ: Այնուհետև ձին կարծես ուրախացած, ոտները գետնից կտրած, գլուխն ու բաշը ցցած, շրն-չապառ հասաւ թագաւորազի պալատի դուռը:



Չարըն այնտեղ, բարին այստեղ:

Վ Ե Ր Ձ

Յ Ա Ն Կ

1. Ի՞նչ սիրուն միտք ունէր Շէն թագաւորը 3
2. Ի՞նչպէս խաբուեց Շէն թագաւորազը 5
3. Ինչի՞ց մեռան Շէն թագաւորն ու թագուհւ. 9
4. Աղունիկն ինչո՞ւ էր տանջուում հարսի ճանկերում 16
5. Ի՞նչ անգութ բան արեց նախանձոտ հարսը 25
6. Եղբայրն ի՞նչ դարձաւ քրոջ համար 32
7. Կոնատուած Աղունիկը որտեղ թափառեց 37
8. Աստուած ո՞ւմ հանգիպեցրեց նրան 42
9. Ո՞վ նորից քամբադդացրեց Աղունիկին 46
10. Զաւակներ ի հետ ո՞ւր գնաց 53
11. Աստուած ի՞նչպէս օգնեց նրան 59
12. Ո՞վ գնաց Աղունիկին փնտրելու 66
13. Զէն թագաւորազին անտառում ո՞վ պատահեց 72
14. Շէն ու Զէն թագաւորազներն ինչո՞ւ Աղունիկին չէին ճանաչում 76
15. Աղունիկն ի՞նչպէս ամաչեցրեց անիրաւ եղբօրը 80
16. Ի՞նչ պատուհաս քաշեց չար հարսը 87

ԲԱՅԱՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ



Անկ-մանկ լինել—շուարիւ
Ակը տալ—այցելել
Դեղապետ—ճար ու հնար
Դմբուզ—կոռւփ
Երեսարք—դէմք
Զիզի—փայլուն բան
Ժախո—անպէտք բոյս
Կառ ընկնել—վտուռել
Կերսար—սկեսրի ամուսին
Կից—բուռ
Կխճորել—ոտնատակել
Ծաղիկ—զաւակ
Ծանգով ընկնել—տեսիլ ունենալ
Ծակծակուած—գնդակահար եղած (անէծք)
Հետը հետին—խակոյն
Ղժժոն—սրընթաց
Ճիտ—վիզ
Մաքուղ մանկ—թագնուել. գաղտնի լսել
Մլուղ անկ—զբաղուել
Միսն ուտել—խելքը կորցնել
Նղզիլ—թուլանալ, բնել
Շանթել—այբել, խայթել
Ոչ ու փուչ—անպիտան, գարշելի
Ոսկիքոչոր—ոսկեմազիկ

897.99
R-17

Պրնկուած—քրքրուած
Սկել—քշել, տանել
Սեարտած—տարեկուսած
Վրչալ—լաց լինել երկար
Տապակ տապակ դալ—խորովուել
Դնելհանգում—ուշ գիշեր
Օձիոր—նախանձոտ



ՊԵՏԱԿԵՐՁԱՐԴԵԼՈՒ ԸՌԹՈՎ

Որքան որ ցանկալի բան է սիրուն պատկերազարդ գրքեր տալը հայ պատանիներին, նոյնքան էլ դժուար է դրա գլուխ բերելը հայ իրականութեան մէջ: Քանիցս կոչ ենք արել, որ մենք ամեն տեսակ պայման ընդունելու պատրաստ ենք, եթէ որեւէ գրավաճառ կամ մանկական գրականութիւն սիրող անձ միջոց տայ մեր «Հեքեարքները» կամ «Շէն քաղաքի աղջիկը» վայելուչ պատկերազարդած լոյս ընծայելու: Խրախուսող ձայնի փոխարէն անտարբերութիւն եղաւ պատասխանը: Եղած իլլիւստրատորների մի մասի գործը գտնում էինք անբաւարար, իսկ լաւերի պահանջած առասպելական գրները մեր միջոցներից շատ վեր էին: Ուրեմն ինչպէս գոհացում տայինք մեր սրտին, որ չէր կամենում այս գրքի գ. տպագրութիւնն էլ «Ծովիկար»-ի պէս առանց պատկերների թողնել: Երկար դիմումներից յոգնած որոշեցինք մեր ցանկացածը որոնել արդէն պատրաստ պատկերների ժողովածուների մէջ, որ մեծ քանակութեամբ ունէինք մեր ձեռի տակ: Այդ անում էինք աւելամայ, հայ իրականութեան երեսից անճարացած: Ամենայն խնամքով ընտրեցինք այն նկարները, որոնք ոչ միայն համապատասխանում էին գրքի բովանդակութեանը, այլ և ճաշակով ու գեղեցիկ էին: Կլիշէ պատրաստելիս մի երկու պատկերի վրայ տեղի են ունեցիլ չնչին փոփոխութիւններ:

Հեղինակ.

ԹԻՖԼԻՍԻ զրախանութներում վաճառում են մեր
աշխատութիւնները:

1. ԾՈՎԻՆԱՐ. գ. տպ., 25 լ.
2. ԵՐԿՈՒ ԱՂԲԵՐԱՅԵՂ. բ. տպ., 30 »
3. ԱՍՏՈՒԱԾ ԱՂԲԱՏԻ ԿԵՐՊՈՒՄ. 20 »
4. ՀԷՔԻԱԹՆԵՐ. 30 »
5. ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑ { ա. երեք խոստովանուածիւն } 30 »
 պատկերով { բ. երեք ոսկու պատմութ. }
6. ԱՆՄԵՌ ԱՇԽԱՐՀ. 8 »
7. ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ. 30 »
8. ԾԵՐԵՐԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ. պատկերով. 20 »
9. ՍՐՏԱՇԱՀ ԲԱՆԵՐ. 20 »
10. ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆ. 5 »
11. ԱՍՏՈՒԱԾ ԶԸ ՃԱՆԱԶՈՂ. 10 »
12. ԳԱԼՕ ԱՓՕ. բ. տպ., 12 »
13. ԺԱՄԱՆԱԿԸ ՈՍԿԻ. պատկերներով. 40 »
14. «ՍԻՐՏ» զբօսայգի պատկերներով. 40 »
15. ՔԱԶ ԱՂԱՍԻ կամ ՍԻՐԵԼԻ ՀԵՐՈՍ 25 »
16. ՍԱՍՈՒՆՅԻ ՅՈՎՆԱՆ. 30 »
17. ԽՈՒԼ ԽԱԶԻԿ. բ. տպ., 25 »
18. ԵՐԿԱՍՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 50 »
19. ՓՈՔՐՈՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ. 15 »
20. ՎԱՐԴԱՆ. ՂԵՒՈՆԴ. ՄԱՍԻՆ. պատկերներով 30 »
21. ՎԷՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ զբօսայգի դահլիճները 10 »
22. «ՍԻՐՏ» զբօսայգի մանկների նամակները որդուն 15 »
23. ՇԷՆ ԹԱԳԱՌՈՐԻ ԱՂԶԻԿ. գ. տպ., պատկ. 30 »

Կրօնի դասագրքեր

24. ԿՐՕՆԻ ԴԱՍԱՏԻՈՒԹԻՒՆ. ա. բաժ. ձեռնարկ		
	ուսուցիչներին համար	40 »
25. ԿՐՕՆ. ա. տարի. աշակ. դասագիրք		10 »
26. ԿՐՕՆ. բ. տարի. աշակ. դասագիրք		20 »
27. ԿՐՕՆ. գ. տարի. աշակ. դասագիրք		35 »

Հեղինակի հասցեն՝ Թիֆլիս. Միքայելեան
փողոց № 82. Բնակ. 9.

051.55
R-17

ՀՀ Ազգային գրադարան



NL0369949

89199

Բ-17

60355

The image shows the front cover of an antique book. The main cover material is a dark blue or black paper with a complex, organic marbled pattern, possibly a 'stone' or 'shell' pattern. The paper is heavily worn, with numerous scratches, scuffs, and areas where the surface has been rubbed away, revealing a lighter, yellowish-tan underlayer. A small, irregular piece of this underlayer is visible near the center-left. The spine of the book, located on the right side of the image, is bound in a dark brown, textured material, likely leather or a heavy cloth, which also shows signs of age and wear. The overall appearance is that of a well-used, historical volume.